

Երկինք ու երկիր պիտի
անցնին, բայց իմ խօսքերս
բնաւ պիտի չանցնին :
Ինչ որ կ'ըսեմ ձեզի
ամենուն կ'ըսեմ,
ԱՐԹՈՒՆ ԿԵՑԷՔ :
Մարկ. ԺԳ. 31, 37 :

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵԻՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ասիկա կը ծանուցանեմ
Թէ ան որ խնայելով կը
սերմանէ՝ խնայելով պիտի
հնձէ, ու ան որ առատութիւն
նով կը սերմանէ՝ առա-
տութիւնով պիտի հնձէ :
Բ. Կորնթ. Թ. 6 :

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Բաժնեգին տարեկան. — Տրանսա եւ Սուրիա 5 ֆր. Արտասահման 1,50 շիլ կամ 40 ամերկ. Սէնթ
RÉDACTEUR H. N. GHAZAROSSIAN, 29, Rue Fauchier — MARSEILLE (France)

ԹԻԻ 8-9

Դ. ՏՍՐԻ

ՕԳՈՍ. ՍԵՊՏ. 1928

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԸՆՏԻՐ ՑԵՂ

Բայց դուք ընտիր ցեղ մըն էք. Ա. Պետ. Բ. 9:

Սողոմոն իմաստուն աչքառու խօսք մը ունի
իմաստութեան գրքին ժողովողի Ժ. 16 - 17 հա-
մարներուն մէջ : Վա՛յ քեզի երկիր, երբ քու թա-
գաւորդ տղայ է, ու իշխաններդ առտուանց կե-
րակուր կ'ուտեն : Երանի՛ քեզի, երկիր, երբ քու
թագաւորդ ազնուազարմ է, եւ քու իշխաններդ
ատենով կ'ուտեն՝ ուժի համար եւ ոչ թէ գինո-
վութեան համար :

Հոս երկու բան կը մատնանշէ. Առաջին, Տը-
ղայ, անգիտակից թագաւորի մը իշխանութեան
տակ ժողովուրդին կրած դժբաղդութիւնները :

Իշխաններն ալ, որոնք կարեւոր բաներու վը-
րայ խորհելու, երկրին բարօրութեան վրայ մտա-
ծելու մեծ պաշտօնն ունին, անտեսելով զայն՝
իրենց առօրեայ առաջին խորհուրդը իրենց ան-
ծին, իրենց ստամոքսին վրայ կը կեդրոնացնեն :
Վատասերութի կատարեալ նշանն է այս, որ ազ-
գի մը կործանման առջեւէն կ'երթայ :

Երկրորդ, ազնուազարմ թագաւորի մը իշխա-
նութեան պարզեւած օրինութիւնները : Անոր իշ-
խաններն իսկ ատենով կ'ուտեն : Պարտականու-
թեանց գիտակից, իրիկունը սոյն խորհուրդներով
լի անկողին կը մտնեն : Առտուն երբ կ'արթնան,
ունին շատ մը պարտականութիւններ, զորոնք
կատարելէ յետոյ է որ կերակուրը մտքերնին
կ'իյնայ, ու կերակուրն ալ կ'ուտեն ուժի հա-
մար եւ ոչ թէ գինովութեան : Չկայ «ո՛վ իմ ան-
ծս, կեր, խմէ եւ ուրախ եղիր»։ Կապա, ո՛վ իմ
անծս, կեր, խմէ, վառնդի ամէնօրեայ ծանր պար-

տականութիւններդ քեզ կ'սպասեն :

Ազնուազարմ թագաւորի մը աչաւուրջ
հսկողութեան տակ ապրող ազնուազարմ իշխան-
ները գիտեն չափաւորութիւն պահել. (Ա. Կորնթ.
Թ. 25) : Անձնազաւորութիւնը ասպետներու բարձ-
րագոյն առաքինութիւնն է, որովհետեւ անոր
մէջ վարժուելով միայն յաղթական պիտի ելլեն :

Հին հեթանոս ազգերուն ալ ծանօթ էր սոյն
գաղափարը. անոնք դիւցազն կը կոչէին այդ ազ-
նուազարմ ասպետները եւ վերջապէս կ'աստուա-
ծացնէին զանոնք : Հերակլէսը, Բերսէոսը, Վա-
հագնը, Զիկֆրիտը կենդանի օրինակներ են ասոր :

Գեւ ներկայ քրիստոնէական ազգերուն պատ-
մութեան մէջ ալ կը տեսնենք թէ որքա՛ն բարձր
տեղ կը բռնէ մարդոց մտքին մէջ ազնուազար-
մութեան գաղափարը : Անգլ իացի լորտն ու գեր-
ման ազնուազարմ ֆօնը սիրով չեն մտնեար եւ
խառնուիր հասարակ ժողովուրդին հետ :

Ամերիկացին իր ազնուազարմութիւնը պա-
հելու համար գաղթականական օրէնքին կառչած
կը մնայ, գիտնալով հանդերձ թէ ատով շատ մը
ընտանիքներ թշուառ կ'ըլլան : Ազնուական մը
չուզեր այնքան շուտով իր ազնուազարմութենէն
իյնալ : Ազգի մը ազնուականները ազգը կանգուն
կը պահեն : Սպանիա իր մեծ փառքէն շուտով
ինկաւ, վասնզի իր ազնուական դասակարգը
ազգին սիւնը կորսնցուց եւ մասամբ ալ ինք
իր ձեռքովը խորտակեց զայն :

Ցեղին ազնուական դասակարգն է որ ցեղա-

յին յատկանիշները անվճար կը պահէ եւ կը զարգացնէ զանոնք, եւ ուստի իրաւունքով ազգեր իրենց ազնուական դասակարգը խնամով կը պահեն :

Աստուծոյ մտքին մէջ ալ սկիզբէն յետէ ազնուազարմութեան գաղափարը կար. Անիկա նպատակ ունէր ընտիր ցեղ մը պատրաստել եւ ասոր համար նախնական օրերուն մէջ Աբրահամը ձեռք առաւ անկէ ընտիր ցեղ մը երեւան բերելու եւ անով աշխարհը բարձրացնելու : Իսրայէլի ժողովուրդն էր այս գոր ընտրեց, որպէսզի անոր վրայ իր ողորմութիւնն ու փառքը յայտնի ընէ, որպէսզի անոր պատմութիւնն ու հոյովոյթը մեզ ցոյց տան թէ ինքը կենդանի եւ անձնաւորեալ Աստուած է :

Իսրայէլի պատմութիւնը աստուածային յայտնութեանց եւ սիրոյ ապացոյցներու շղթայով մըն է : Անիկա որքա՞ն հոգ տարաւ այս ազգին : «Այս ժողովուրդը ես ինծի համար ստեղծեցի, անոնք իմ գովութիւնս պիտի պատմեն» : «Իմ վկաներս դուք էք կ'ըսէ Տէրը, նաեւ իմ ընտրած ծառաս . . . » Եսայ. ԽԳ. ԳԼԼԽ :

Այս ազգը որքան յաճախ վայելեց Աստուծոյ հրաշքները պատերազմի եւ խաղաղութեան մէջ եգիպտոսէն սկսեալ : Բայց ի՞նչպէս վարձատրեց աստուածային սէրն ու շնորհքը : Միշտ ծուռ ճամբաներու դիմեց : Խստապարանոց եւ զանգատող, միշտ աչք տնկեց ուրիշ ազգաց չաստուածներուն ու վերջապէս կորսնցուց իր աստուածային ընտրականութիւնը, վատասեռեցաւ. մինչեւ որ վերջապէս մերժեց այն քարը, որ Աստուծոյ կողմէն իբր անկեան քար որոշուած էր, ու Իսրայէլի Մեսիան խաչը հանել տուաւ. այն քրիստոսը, որ իրենց իբր փրկութիւն տրուած էր. Իսրայէլ մերժեց զայն ըսելով. «Ասոր արիւնը մեր վրայ ու մեր որդիներուն վրայ ըլլայ» :

Ընտրեալ ազգը այսպէս իր կոչումէն ինկաւ եւ վերջապէս այգիին Տէրը ստիպուեցաւ ձիթենիին իսկական ճիւղերը կտրել եւ անոր տեղը պատուաստել վայրի ճիւղեր, որ բունէն առատ եւ ընտիր սնունդ ընդունելով՝ ընտիր ցեղ մը ըլլան. (Հռովմ ԺԱ.) :

Եկեղեցին էր այս, որ ընտրուեցաւ ամէն ազգերէն, յոյներէն, հռովմէացիներէն եւ բարբարոսներէն, եւ ամէն հեռաւոր եղողներէն, որոնք մեր Տէր Աստուածը պիտի կանչէ. (Գործ. Բ. 39) :

Արդ, առաքեալը չըսեր Իսրայէլին՝ դուք ընտիր ցեղ մըն էք, հապա եկեղեցիին. անոնց, որ հաւատացին, եւ որոնց իշխանութիւն տրուեցաւ Աստուծոյ որդիներ ըլլալու : Բայց դուք ընտիր

ցեղ մըն էք, այսինքն հին ուխտի ընտրուածն. ըսն ընդդէմ : Ընտիր ցեղ մը ընդդէմ անոնց, որոնք քրիստոսը մերժեցին :

Պետրոս առաքեալ այս գաղտնիքը առաջին անգամ կողմնելիոսի տանը մէջ հասկցաւ եւ բացագանչեց, «Ճշմարտութեամբ կը հասկնամ որ Աստուծոյ քով աշառութիւն չկայ, հապա ամէն ազգի մէջ, ան որ Անկէ կը վախնայ ու արդարութիւն կը գործէ, Անոր ընդունելի է» . (Գործ. Ժ. 34-35) :

Բայց Աստուածային այս ընտրութեան մէջ մէկ նշանակելի կէտ կը գտնենք, որ տարբեր է մարդկային ընտրականութենէն : Անիկա ազգերու մէջէն ոչ թէ մարդկային ակնոցով ազնուական սեպուածներն ընտրեց, ոչ ալ իմաստուն սեպուածներն ու շատ բան գիտողները, ինքզինքնին արդար համարողները, վասնզի մարդկային ամէն արդարութիւն եւ վայելչութիւն ապականութիւն է Աստուծոյ առջեւ, հապա Աստուած աշխարհի յիմար (սեպած)ները ընտրեց, ու աշխարհի տկարները, եւ ցածագիներն ու անարգները, եւ ոչինչները . . . , որպէսզի մարմին մը չպարծի Աստուծոյ առջեւ, զի ոչ մէկ մարդկային էակ ազնիւ է. մարդուս սրտէն միշտ չար խորհրդներ կը բղխին :

Այսուամենայնիւ Աստուած այդ անազնիւ արիւնը ազնուացնելու համար շիճուկ մը գտած է Գողգոթայի սարին վրայ, ուր աշխարհի ամենաազնիւ արիւնը հոսեցաւ եւ որուն մարդկային երակներուն մէջ ներմուծուելովը կարելի է զանոնք ազնուացնել : Այդ պատուաստը ոչ միայն հին անազնիւ հիւանդութիւնները կը ջնջէ, այլ մարդուն մէջ նոր եւ ազնիւ կեանքի մը կարելիութիւնները կ'ստեղծէ : Ու ես եւ դուն ալ ընտրուեցանք, մենք որ միշտ թշնամի եւ ապստամբ էինք, ճշմարտութեան հակառակող, Անոր կամքը կատարելու միշտ թերացող, Անոր խօսքը չյարգող, բայց ողորմութիւն գտանք ընտիր ցեղին անդամներ ըլլալու եւ ցնծութիւնով երգելու ընտրեալներու համերգը,

Ես բարկութեան արժան որդի

Տէր Յիսուսէն շնորհք գտայ.

Ինք բաժանող պատը քակեց,

Եւ ես Տէրոջս հետ միացայ.

Ո՞վ կատարեց այս գեղութիւն,

Ողորմութիւն, ողորմութիւն :

(Շար.)

ՊԴԻՆՁԷ ԱԽԱՉԱՆԸ ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՉ

ՏՕԲԹ. Ֆ. Պ. ՄԱՅԻՐ

(Շար. 7 ԹԻԱԷՆ ԵՍ ՎԵՐՉ)

ԱՆ ԳԻՏԷՐ ԹԷ ԻՆՉ ՄԵԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԾԱՆՐԱՆԱՐ ԱՅՍ ՄԱՐԴՈՅ ՈՒՍԵՐՈՒՆ ՎՐԱՅ.— Գիտէր թէ Ինք քահանայապետն էր Աստուծոյ տանը եւ անոնք քահանաները, գիտէր թէ անոնք Սուրբ Հոգիով մկրտուելէ առաջ մաքրուելու էին : Գիտէր թէ անոնք պիտի ըլլային Իր Աւետարանին սրբազան անօթները կրողները, որոնք մարդկային հպարտութեամբ կամ անմաքրութեամբ արատաւորուելու չէին : Գիտէր թէ նոյն իսկ Գեթսեմանիի եւ Գողգոթայի գաղտնիքները անհասկնալի պիտի ըլլային անոնց եւ միմիայն անարատ ձեռքեր եւ մաքուր սիրտ ունեցողները պիտի կարենային կայնիլ սուրբ լերան վրայ : Անոր համար օրինակներով ուզեց դրօշմել անոնց սիրտերուն եւ միտքերուն վրայ թէ լուացման պէտք ունէին :

Ամենաբարձր սէրը ամենէն շուտ կը նշմարէ իր սիրածին սխալները եւ թերութիւնները ու հրավառ սէրը գոհ չմնար երբ իր սիրոյ առարկան որեւէ չափով կատարելութեան աստիճանէն վար մնացած տեսնէ, քանզի գիտէ թէ ամենամեծ օրհնութիւնը կը կայանայ կատարելութեան մէջ : Նախանձը գոհ կը մնայ սխալը ցուցնելով միայն, սակայն սէրը կը տեսնէ սխալը ու լուրջեամբ կը սպասէ յարմար պատեհութեան մը որպէսզի փափկանկատութեամբ ուղղէ իր սիրելիին թերութիւնները :

Ամենէն կատարեալ երաժշտագէտը ամենէն շատ կը տանջուի անկատար երաժշտութենէ մը, սակայն նաեւ ամենէն շուտ կը նշմարէ ճշմարիտ արժանիք մը եւ ժամանակ կը վատնէ զայն երեւան բերելու : Նոյնպէս ալ Յիսուսի անբիծ սրբութիւնը կարող էր անմիջապէս նշմարել իր բարեկամներուն անսրբութիւնը եւ չկրնալով դիմանալ անոնց թերութեան, կը ջանար զանոնք ուղղել : Մի վախճար Յիսուսի անհղ սրբութենէն, անոր մէջ կը կայանայ քու յոյսդ : Ան գոհ պետի չմնայ մինչեւ որ քեզ իրեն կերպարանակից ընէ : Երբէք մի մոռնար թէ Անոր սրբութեանը կ'ընկերանայ նաեւ Անոր գորովալի սէրը :

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆԸ ՈՐ ԿԸ ԾԱԾԿԷ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԵՂՔԸ.— «Ընթրիքէն ելաւ եւ հանդերձները մէկդի դրաւ ու ղենջակ մը առնելով մէջքը փաթթեց» : Ուրիշ Առաքեալ մը կ'ըսէ «Ծառայի կերպարանք առաւ» : Անոր այս արարքին մէջ կը տեսնենք մեր փրկագործութեան նշանակը : Այս է Անոր մարդեղութեան բանալին : Բառերու աննշան փոփոխութեամբ մը կրնանք այսպէս կարդալ «Անիկա գահէն ելաւ, մէկդի դրաւ իր լուսոյ զգեստները, վրան առաւ մարդկայնութեան խեղճուկ ղենջակը, փաթթեց զայն իր փառաւորեալ մարմինին շուրջ, թափեց իր արիւնը խաչի կոնքին մէջ ու սկսաւ լուալ մարդկային ապականութեան ու մեղքին աղտոտ բիծերը» : Քանի որ մարդկային մեղքին ակը հպարտութիւնն էր, Քրիստոս պէտք էր անոր հակառակ դեղթափ մը պատրաստէր իր բացարձակ խոնարհութիւնով, խոնարհութիւն մը որ կարող չէր աճիլ այս երկնակամարին տակ, այլ զալուէր տեղէ մը ուր ամենէն խոնարհները կը հասնին ամենէն բարձր աստիճաններուն եւ ուր ամենէն շատ մանուկներու նմանողները կը տիրեն իբրեւ թագաւորներ :

ԱՅՍ Է ՆԱԵՒ ՄԵՐ ԱՌՕՐԵԱՅ ԼՈՒԱՅՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ.— Մենք միանգամ ընդ միշտ լուացուած ենք Գողգոթայէն վազող կրկնակի կարմիր հոսանքին մէջ, սակայն կարօտ ենք առօրեայ լուացման : Կեանքի պողոտաներուն փողիները կ'աղտոտեն մեր ոտքերը. մեր ձեռքերը կ'արատաւորուին մեր կրած հագուստներուն նման, մեր շրթունքները կ'ապականին իրենց արտայայտած պարապ, անվայել ու կրքոտ խօսքերով եւ մեր սիրտերը չեն պահեր այն անարատ զգեստները, որոնցմով դուրս կ'ելլենք մենք մեր առաւօտեան առանձնարանէն : Շարունակ Պղնձէ Աւագանին դիմելու ենք, որպէսզի մաքրուինք : Արեօք կը հասկնա՞ք թէ մեր ամեն մէկ խոստովանութիւնը ի՞նչ կը նշանակէ Քրիստոսի համար : Ճիշդ այն վայրկեանին որքան կարեւոր գործի մէջ ալ որ գտնուի Ան, ինչ հրամաններ ալ որ տալու վրայ ըլլայ ամենաբարձր հրեշտակներէն մէկին, որքան ալ որ տիեզերական եկեղեցիին հոգը ծանրաբեռնելու ըլլայ իր ուսերը : Ան անմիջապէս կը թողու այն ամենը կատարելու

պաշտօն մը որ չուզեր յանձնել որեւէ ուրիշ մէկին: Կրկին կը խոնարհի գահէն, ղենջակ մը կը փաթթէ իր մէջքը եւ կը ջանայ քեզմէ եւ ինձմէ հեռացնել այն արատը զոր կատարեալ սէրը կարող չէ անտես ընել: Բեւեռներուն նշանները երբեք չեն վրիպիր Անոր աչքերէն: Ան երբեք չմոռնար Գողգոթան եւ Արիւնը, չանցնիր բնաւ ժամ մը առանց խոնարհելու եւ ապականած հոգի մը մաքրելու աղափոք գործէն: Ահա իր այս խոնարհութեան համար է որ Անիկա Աստուծոյ գահին վրայ նստած իր գաւազանը կը ճօճեցնէ սիրտերու եւ աշխարհներու վրայ:

**ԱՅՍ Է ՆԱԵԻ ՄԵՐ ԻՐԱՐՈՒ ԾԱՌԱՅԵ-
ԼՈՒ ԲԱՆԱԿԻՆ.**— Ես յաճախ խորհած եմ թէ մենք պէտք եղածին չափ չենք լուար իրարու ոտքերը: Մենք կը նկատենք այն թերութիւնները որ կ'ապականեն մեր շուրջը գտնուողներուն նկարագիրը եւ գոհ կը մնանք զանոնք նշմարելով եւ քննադատելով միայն. չենք համարձակիր զանոնք հեռացնելու փորձեր կատարել: Մեր այս թերութեան մէկ պատճառն է որ Քրիստոսի նման չենք սիրել, եւ ուրիշ պատճառ մը որ չենք յօժարիր խոնարհիլ, որքան որ հարկը կը պահանջէ: Չէ, մենք կարող չենք մաքրել մէկ արատ իսկ եթէ յօժար չենք ծառայի կերպարանք առնելու եւ մերկացած ծունկերով մինչեւ գետին խոնարհելու: Կարող չենք ուղղել յանցանքի մէջ ինկող մը, եթէ սորված չենք ինքզինքնիս նկատելու մեղաւորներուն գլուխը եւ սուրբերուն ամենէն փոքրը:


Մենք աւելի' կը կարօտինք խոնարհ, սիրող հոգիի մը, որպէսզի այնքան չազդուինք մեզի հասած չարիքէ մը որքան այն չարիքը մեզի հասցնող հոգիին արատաւորումէն: Մեր զգացածէն անհամեմատօրէն աւելի կարեւոր խնդիր մը կայ. — Քրիստոսի աշակերտներէն եւ ո'չ մէկը շարունակելու է իր կեանքը այնպիսի յանցանքներու մէջ որ խոստովանուած եւ Աստուծոյ դատաստանէն անցած չեն, թոյլ տալով որ անոնք միթաքնն իրենց խաղաղութիւնը եւ արգելք հանդիսանան իրենց վկայութեան: Ուստի հսկենք իրարու հոգիներուն վրայ: Զիրար սիրոյ եւ բարի գործերու զըրգունք, կատարեալ անկեղծութեամբ Քրիստոսի նման իրարու ոտքերը լուանք ամենայն խո-

նարհութեամբ եւ գորովալի սիրով: Այս հոգին կ'ստանանք միմիայն Աստուծոյ Գառին հետ հաղորդակցութեան մէջ գտնուելով եւ ընդունելով Անոր սուրբ ու խոնարհ բնութիւնը մեր սիրտերուն խորութեանց մէջ Սուրբ Հոգիին միջոցով:

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐԸ

Թէպէտեւ մեր ամէն մէկէն ալ ճեռուի բէ:

Գ. Առաք. Ժէ: 27



Շատ քիչ մարդիկ կան որ Աստուծոյ չեն հաւատար, բայց ամէնքը միեւնոյն Աստուծոյն չեն հաւատար, ոչ ալ նոյն տեսակ հաւատքով մը: Ոմանց համար Աստուած էակ մըն է շատ հեռաւոր, զոր ճանչնալ եւ սիրել անկարելի է. ասոնց խորհուրդները քիչ անգամ միայն Անոր կը դառնան, իսկ իրենց սիրտերը երբեք: Ուրիշներ Անոր մէջ կը տեսնեն անողոք դատաւոր մը՝ որուն վրայ մտածելն անգամ կը զողացնէ զիրենք, նամանաւանդ երբ մահը կը մօտենայ:


Ուրիշներ վերջապէս, զԱստուած իրենց շատ մօտ կը տեսնեն, ասոնք գիտցած են ճանչնալ Յիսուս Քրիստոսի մէջ այն Աստուածը որ մարդացաւ՝ որպէսզի կարենայ մարդոցմէ հասկցուիլ եւ սիրուիլ: Աստուած մօտ էր, միշտ մօտ, եւ շատ շատ մօտ, բայց մենք անտեղեակ էինք: Յիսուս զԱյն մեզի յայտնած է ըսելով. — «Ան որ զիս տեսաւ Հայրը տեսաւ»:

Յիսուս Քրիստոսի մէջ մեզի կ'երեւի Աստուծոյ կարողութիւնը Անոր խանդաղատ սիրովը բարեխառնուած: Անոր արդարութիւնը «Սէր»ով շրջապատուած է: Անոր վեհափառութիւնը հայրական եւ ողջագութեամբ յատկութենէն չը գատուիր: Խեղճ սիրտ որ ինքզինքդ յանցաւոր եւ ղեքաղ կ'զգաս. մօտեցիր Աստուծոյ Յիսուս Քրիստոսի միջոցաւ. Անիկա շատ, շատ մօտ է քեզի:

Բ. ՍԱՅԱՆՍ

ՍՍԻՈՒՂԻ ԱՆԿՈՒՄԸ

(Ա. Թագ. Ժե.)



Որպէսզի Սաւուղի կեանքի ամբողջ պարագաները կրնանք հասկնալ պէտք է կարդանք նոյն գրքին Ը. գլուխէն սկսելով :

Այդ մի քանի գլուխները ուսումնասիրելու պահուն կը տեսնենք թէ սկիզբէն իվեր Աստուծոյ ծրագիրը այս էր որ Իսրայէլ՝ Իր սեփական ժողովուրդը, առանց թագաւորի ապրէր : Աստուած կ'ուզէր Ինքը անոնց թագաւորն ըլլալ, բայց ժողովուրդը ուզեց «ուրիշ ազգերու նմանիլ» . անոնք կը նախընտրէին տեսանելի թագաւորութեան մը փառաւորութիւնը քան թէ այն յաւիտենական փառքը որ Եհովային «Սեփական ազգին» կը վայելէ :

Յայտնի է թէ Տէր Աստուած Սամուէլ մարգարէին բերնով լուրջ յորդոր մը տալէ վերջ, կը հաւանի անոնց փափաքը կատարել Սաւուղը թագաւոր ընտրելով :

Շատ հետաքրքրական պիտի ըլլար Սաւուղի ընթացքը մանրամասնորէն ուսումնասիրել, ըմբռնելու համար թէ ո՞րքան դիւրին է հոգեով սկսիլ եւ մարմինով վերջացնելը, ինչպէս Պողոս առաքեալ կ'ըսէ Գաղ. Գ. 3 համարին մէջ :

Ուշադրութեան առնենք Սաւուղի կոչման նախախնամական բոլոր պարագաները : Այն հրաշալի նշանները, որոնք յաջորդաբար երեւցան իր կեանքին մէջ (Գլուխ Ժ) : Հիանալի յաղթութիւնը, որ շնորհուեցաւ իրեն ժողովուրդը ազատելու համար (Գլ. ԺԱ.) : Վերջապէս այն մեծ համբաւը, որ իր թագաւորութեան սկզբնական շրջանէն սկսեալ կը վայելէր, այս ոչ միայն իր ֆիզիքական վայելուչ եւ հրապուրիչ կազմին կամ զօրութեան համար էր, հապա իր դէմ եղող ապստամբներու հանդէպ ցոլցուցած բարեացակամ վերաբերումին համար (Ժ. 2, ԺԱ. 13) : Բայց եւ այնպէս այդ մեծ ազատութեան կը յաջորդէ, (այն ինչ որ ԺԲ գլուխէն մէջ կը պատմուի) Աստուծոյ կողմէն ահաւոր դատապարտութեան պատգամը, որ Սամուէլի բերնով կը խօսուի, ու երկնային ահաւոր նշաններով կը յայտնուի, մինչեւ որ ժողովուրդը ահով ու դողով կ'աղաղակէ «Մենք մեզք գործեցինք» : Ասոր վրայ մարգարէն իր խօսելակերպը կը փոխէ եւ կը յորդորէ զանոնք, որպէսզի Աստուծոյ դառնան եւ զԱյն փառաւորեն : Բայց կ'ըսէ նաեւ թէ չպիտի աղատին այն լուծէն, զոր գիտակցաբար իրենց վրայ առին, ուստի պէտք է անոր պատիժը կրեն :

Ճշմարտութիւն մը կայ որ երբեք մոռնալու չենք. Երբոր կ'ուզենք մեր անձնական կամքին համաձայն ապրիլ, Տէրը կը թողու որ ազատօրէն հետեւինք, մոլորելով ու անհնազանդ գտնուելով, մեր ուզածին պէս մեր մարմնոյն բոլոր ցանկութիւնները կատարենք ո՞րն է եւ որ զընտմով դառնանք ու աղաղակենք. «Հայր իմ, մեղանչեցի . . . » Այն ատեն Իր անհուն ողորմութիւնով եւ գթութիւնով կը ցոլցնէ մեզի թէ ինչպէս զԻնքը փառաբանելու ենք մեր հնազանդութիւնով, մինչ իսկ

այն բոլոր դժուարութիւններուն մէջ, զորոնք մեր ապստամբութիւնով մեր վրայ բերած ըլլանք : Յաճախ դէպի ետ իրերու երկայն ճամբայ մը կը բացուի, որուն շրջանին տխուր եւ ցաւալի դասեր սորվելու պիտի պարտաւորինք, որոնք չպիտի տրուէին մեզի, եթէ մենք սկիզբէն մեր հոգեւոր կեանքը աւրած չըլլայինք եւ կրցած ըլլայինք ըսել. «Ոչ թէ իմ կամքս, հապա քու կամքդ թող ըլլայ» :

ԺԵ. գլուխէն մէջ կը տեսնենք թէ Աստուած խիստ լուրջ հրաման մը կուտայ : Աստուծոյ կողմէ շատոնց ծանուցուած գաղափարներ Սաւուղի ձեռքով գործադրուելու էր Ամաղէկ անիծեալ ազգին դէմ, (որ սատանային եւ իր հրեշտակներուն շուքն էր (Բ. Օր. ԻԵ. 17-19)) : Հրամայուած էր որ մեծ ու պղտիկ, հարուստ աղքատ, մինչիսկ դաշտի գազանները առանց մէկ կենդանի արարած խնայուելու բնաջինջ ըլլար : Այսպիսի ահաւոր եւ սոսկալի պարտականութիւն մը յանձնուած էր Աստուծոյ ժողովուրդին եւ որպէսզի այս գործը հաւատարմաբար եւ ճշդիւ կատարուէր, պէտք էր վրէժինդեր ըլլալ չարին, Աստուծոյ արդարութեան եւ սրբութեան համար : Իսրայէլ պարտական էր իր անձնական բոլոր շարժառիթները մէկդի ձգել, քանի որ ինք մի միայն Աստուծոյ ձեռքին մէջ դատաստանի գործիք մըն էր : Բայց Սաւուղ եւ իր ժողովուրդը կարող չեղան մինչեւ վերջ հնազանդիլ. «անոնք խնայեցին Ազաքին եւ պղտիկ ու մեծ արջառններէն լաւագոյններուն» :

Ամաղէկի թագաւորը, այսինքն աշխարհի զօրութիւնը, լաւագոյն արջառնները, այսինքն հարստութեան ցանկութիւնը. ահա այսպիսի անիծեալ եւ անարժէք շահի մը պատճառաւ Սաւուղ կը կորսնցնէ թէ իր թագաւորութիւնը եւ թէ իր Աստուծոյն պաշտպանութիւնը :

Եւ Տէրը ըսաւ Սամուէլին. «Ես Սաւուղը թագաւոր ընելուս զըջացի» : Անկատար հնազանդութիւն մը Աստուծոյ առջեւ լման անհնազանդութիւն կը սեպուի : Աստուած հրամայեց բոլորովին բնաջինջ ընել Ամաղէկը եւ քանի որ հրամանը լիովին կատարուած չէր, յետեւ տարբեր պատիժ աննպատակ պիտի ըլլար :

«Ժողովուրդը աւարին ամենէն աղէկները ողջ թողուց, որպէսզի զանոնք քու Տէր Աստուծոյ դղոհ մատուցանեն», ըսաւ Սաւուղ :

Ո՞րքան փափուկ հրահանգ մըն է ստույգեան հորմէն եղած, անիրաւութիւնը ծածկելու, պարտական գտնուելով թէ՛ անիկա Աստուծոյ ծառայութիւն մը ընել է, ինչ որ ճշմարտութեան հօրը զգուշի է : Ասիկա մեզի Բրիտոններու տարօրինակ եւ սոսկալի կերեւնայ, բայց արդեօք յաճախ ճիշդ այսպէս ըրած չե՞նք : Եղած չէ՞ն պարագաներ որ մենք մեր անհաւատարմութիւնը ծածկել ջանացած ենք, անոր արդիւնքը «Աստուծոյ գործին» զոհելով : Մենք զԱստուած կողպատած չե՞նք մեր աւօրեայ գործառնութեանց մէջ մեր պարտականութիւնները խղճմտօրէն չկատարելով : Հարցնենք իւրաքանչիւրս իր անձին :

Լսենք հիմա մարգարէին խօսքը, որ բուն Եհովային պատասխանն է. — «Միթէ Տէրը առջեւ ողջակէզներու

զոհեցիր, Տէրոջը ձայնին հնազանդութիւն ընկելու չափ հաճո՞յ են» :

Ի՞նչ հաճելի է Աստուծոյ առջեւ : Դրամ՞ը կամ՞ երգործին համար թափուած բռնոր ջանքերը : Ո՞չ մէկը այլ մի միայն լսելու պատրաստ ախոյ՛ջ եւ հնազանդ սիրտ մը :

Առ Աստուած այն ծառայութիւնը որ սրտի կատարեալ հպատակութենէն չբխիլու եւ Աստուծոյ խօսքին համաձայն յօժարակամ հնազանդութեան արդիւնք չէ, բռնորովին ոչինչ է եւ չկրնար մնալու պտուղ բերել :

Եթէ մենք այս մեծ սկզբունքը մտաբերելու ըլլանք՝ այսինքն «հնազանդութիւնը որ զոհէն աւելի աղէկ է», այն ատեն որչափ պիտի յուսադրուինք ու քաջալերուինք մեր ամենօրեայ համեմատ ուսումնասիրականութիւնները հաւատարմաբար եւ սիրով կատարելու՝ գիտնալով որ ամենափոքր գործերն ալ որ Անոր կամքին հնազանդելով կ'ընենք, կրնան Անոր փառքը աւելցնել :

Նկատի առնենք թէ Սաւուղ ի՞նչ դերք բռնեց երբ մարգարէն յայտնեց իրեն Աստուծոյ սարսուխելի եւ անդառնալի վճիռը : Առաջին տեսութեամբ մենք կը խորհինք թէ թագաւորը կը խոնարհի եւ իր յանցանքը կը խոստովանի... «Սեղանչեցի» կ'սղաղակէ, բայց չխառնուինք որովհետեւ ասիկա կեղծ ապաշխարութիւն մըն էր, քանի որ անմիջապէս կ'աւելցնէ «Ինծի հետ դարձիր» եւ յետոյ «մեղանչեցի ըսելով՝ կը յարէ «Հիմա զիս պատուէ» :

Սաւուղ յօժար էր Աստուծոյ առջեւ խոնարհելու, սակայն առանց իր համբուէն եւ իշխանութենէն մազ մը կորսնցնելու ժողովուրդին եւ ծերերուն առջեւ : Անպայման պէտք չէր որ Իսրայէլ գիտնար թէ իրենց թագաւորը Աստուծոյ ցուցուցած եւ հրամայած գործին մէջ պակաս գտնուեցաւ ու այս պատճառաւ մերժուեցաւ :

Ասիկա մեր քրիստոնէական կեանքի մէջ նման խորհուրդ մը չտա՞ր : Ո՞վ է այն հոգեւոր հովիւը կամ՞ առաջնորդը որ չնախընտրէր իր ներքին սենեակին մէջ խոնարհիլ Աստուծոյ առջեւ քան թէ իր համայնքին ներկայութեան :

Ո՞րչափ դժուար է բնական մարմինին իր աստիճանին կամ՞ իրմէ՛ ցած եղող դասակարգի մարդոց առջեւ խոստովանիլ ըսելով, «եղբայրներ, ես մեղանչեցի» :

Ահա, այս է ճիշդ կերպը, որով պիտի կրնանք եկեղեցիին եւ բռնոր հաւատացեալներուն վրայ երկնային օրհնութիւններ տեղացնելու միջոց եւ ճամբայ բանալ որովհետեւ Աստուած կոտորած ու խոնարհ սիրտը բնաւ չանարգեր :

Եռայ. ԾԷ. 15 : Յակոբոս. Դ. 6 : Ա. Պետ. Ե. 6 :

Ք. Ա.



ԻՆՁՊԵՆՍ ԱՊՐԵԼՈՒ Է ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ (*)

ԿԱՐԵԼԻ՞ Է ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔ ՄԸ

ԱՊՐԻԼ

.....

Կա՞յ ասանկ կեանք մը : Յովհաննէս առաքեալ պարզօրէն կ'ըսէ թէ ամէն Աստուծոյ զաւակ աշխարհին կը յաղթէ : Ահա այս է յաղթութիւնը : Կ'ըսէ նաեւ թէ ինչպէս կ'ապահովուի այս յաղթութիւնը : «Ասիկա է յաղթութիւնը որ աշխարհին կը յաղթէ, այսինքն մեր հաւատքը» . (Ա. Յովհ. Ե. 4) : Այսպիսի խոստում մը ունենալէ վերջ ի՞նչպէս կ'արելի է յուսահատօրէն ետ քաշուիլ :

Ասիկա սակայն շատ անորոշ եւ անհաստատ բան մը կը թուի մեզի : Արդեօք մեր հաւատքը փոքրիկ ու տկա՞ր է, կամ թէ արդեօք յաղթութեան յատուկ հաւատք մը չունի՞նք :

Մեզմէ շատերուն մտքէն ներս կը ուղղի այն զաղափարը թէ ճշմարտութեան շատ մօտ էր այն սահմանը, զոր զպրոցական տղայ մը տուաւ հաւատքի մասին, երբ ան ըսաւ. «Հաւատքն է հաւատալ քանի մը որ գոյութիւն չունի» : Որոշ իրողութիւն մըն է թէ շատ մը քրիստոնեաներու համար յաղթական կեանքը զեղեցիկ ցնորք մըն է որ օգին մէջ կը ցնդի կամ մեզմէ խոյս կուտայ երբ կը ջանանք անոր մօտենալ : Ու այսպէս անոր չհասնելով կը յուսանք զայն երկինքի մէջ գտնել :

Սակայն Յովհաննէս առաքեալ չխօսիր երկինքի մէջ տարուելիք յաղթութեան մը նկատմամբ, քանզի հոն «Հաւատքը տեսութեան մէջ կ'ընկղմի» : Ուստի հոս, աշխարհի վրայ յաղթութիւն մը գոյութիւն ունենալու է, որ է արդիւնքն հաւատքի : Տոյերս գրողը սիրով պիտի նուիրէր իր ամբողջ ունեցածը, եթէ այս յաղթութեան ճամբան ասկէ 25 տարի առաջ տեսած ըլլար :

Երկար տարիներ Սուրբ Գիրքի ուսանողութեամբ պարապելէ, բազմաթիւ տարիներ պարապ տեղ փորձութեան դէմ պայքարելէ վերջ՝ անիկա գտաւ ճամբայ մը յաճախակի կրկնուած փորձութիւններէն ազատելու եւ նոր կեանք մը թեւակոխելու : Նոր եւ կենդանի ճամբայ մըն էր

*) Սոյն յօդուածաշարքը իր անունը բնութեցողներու, անձանց պաթող հեղինակի մը գրքովէն կը քաղենք, յուսարով որ շատերու, Թանկագին ծառայութիւն մատուցանէ իրենց յաղթական կեանքի շաւղներուն մէջ :

(Ծնն. Խմբ.)

այն ինձ համար եւ ես եռանդագին մտայ այդ կեանքին մէջ, տեսայ թէ յաղթութիւն կոչուած բանը գոյութիւն ունի եւ կը զարմանամ թէ մինչեւ հիմա ինչպէ՞ս տեսած չէի այդ ճամբան։ Այս նոր վիճակին գիտակցութիւնը սիրտս ուրախութեամբ լեցուց եւ կը բաղձամ որ ուրիշներ ալ նոյն օրհնութեանը հասնին այս «Վերջին օրերուն մէջ»։ Եւ չկա՞ն քրիստոնեաներ որ սրտագին կը փափաքին աւելի յորդառատ կեանքի մը հասնիլ։

Յաղթական կեանք, ի՞նչ յոյսեր կը պարունակէ այս խօսքը։ Ուր որ ծանուցում մը կը տեսնուի թէ այս նիւթին շուրջ պիտի խօսուի, այրեր եւ կիներ կը խոնուին, որպէսզի այսպիսի կեանքի մը գաղտնիքը գտնեն։ Անոնք որոշապէս գիտեն թէ ուր որ յաղթութիւն ըլլայ, հոն պարտութիւնը կ'անհետանայ, գիտեն թէ հոն կ'անյայտանան այն տխուր ու ճնշիչ ելեւէջները մեր հոգեւոր կեանքին մէջէն։ Կը դադրինք ուրանալ մեր Վարդապետը եւ վերջ կը գտնեն մեր այդ կարգի վճատեցուցիչ փորձառութիւնները։

Յաղթութեան կ'ընկերակցի խաղաղութիւնը։ Խաղաղութիւն մը, որ իրապէս ամէն մտքէ վեր է։ Խաղաղութեան կ'ընկերակցի ուրախութիւնը։ «Ուրախ էք անպատմելի ու փառաւորեալ խնդութիւնով»։ (Ա. Պետ. Ա. 8)։

Ուրախութեան կ'ընկերանայ իշխանութիւնը, Աստուծոյ իշխանութիւնը։ Ուրեմն յաղթական կեանքն է խաղաղութեան, խնդութեան եւ իշխանութեան կեանք մը։ Ո՞վ գոհ պիտի չըլլար այսպիսի կեանքէ մը։

Ասկէ աւելի գերիվեր կեանք մը կարելի՞ է փնտռել։ Ահա այս կեանքն է որ Քրիստոս մեզի կ'առաջարկէ ընդունիլ։

Տողերը գրողին նպատակն է այնպիսի պարզ եւ յստակ կերպով մը ներկայացնել այս կեանքը, որ ամենէն պարզամիտ անհատն անգամ դժուարութիւն չունենայ զայն հասկնալու։ Ուրեմն յաջորդաբար պիտի ուսումնասիրենք թէ ինչպէս կարելի է ձեռք բերել եւ պահել այդ կեանքը։ Ի՞նչ են անոր դժուարութիւններն ու վտանգները։ Կարելի՞ է զայն կորսնցնել, եւ եթէ կարելի է զայն կորսնցնել, կարելի՞ է զայն վերըստանալ։ Պիտի ուսումնասիրենք թէ ի՞նչ է իրական եւ ի՞նչ է կեղծ յաղթութիւնը։ Պիտի ջանանք ներկայացնել յաղթական կեանքի ցընծութիւններն ու փորձութիւնները։

(Շար.)

Ի՞ՆՉՊԷՍ ՄԵՂԱՆՉԵՄ

(Ծննդ. ԼԹ. 9)

Յակոբի զաւակներէն ամենալաւ նկարագիր ունեցողը եւ բարեպաշտը Յովսէփն էր. անիկա իր եղբայրներուն չէր նմաներ, գեղեցիկ ու լուսաւոր աստղի մը նման կը փայլէր իր հօրը տանը մէջ։ Հայրը զինքը կը սիրէր եւ ատոր ի նըշան գեղեցիկ վերարկու մը շինել տուած էր իրեն։

«Ի՞նչպէս չարութիւն ընեմ» էր իր նշանաբանը, ատոր համար իր եղբայրներուն չարութիւնը տեսնելով հօրը լուր կուտար. ոչ թէ որովհետեւ չէր սիրեր կամ կ'ատէր զանոնք, հապաորովհետեւ չէր ուզեր որ իր եղբայրները չարութիւն ընէին եւ Տէրոջը սիրտը վիրաւորէին. այսու ամենայնիւ Յովսէփ հակառակ իր բարձր գաղափարականին ատելի եղաւ իրենց։ Անոնց նախանձն ու ատելութիւնը ալ աւելի շատցաւ անոր հանդէպ, երբ անոր երկու երագները լսեցին. «25^օ որ նախանձը ամէն չարեաց աղբււրն է»։ Այսպէս ատելութեան եւ նախանձի պատճառաւ Յովսէփը ծախեցին, որ իբր գերի ծառայեց Պետափրէսի տանը մէջ։ Սակայն Տէրը Յովսէփին հետն էր, օրհնեց անոր գործը եւ ինք օրհնութիւն եղաւ իր այդ նոր տեղին մէջ։

Քսաներկու տարեկան էր ծախուած ատենը. օտարական մը օտար երկրի մէջ, անծանօթ տեղին սովորութեանց ու բարքերուն։ Բայց այդ օտարութեան մէջ մէկը կար որ իրեն անծանօթ չէր եւ միշտ իր հետն էր, այն Աստուածը՝ որմէ ինքը կը վախնար։ Ինչո՞ւ համար մարդիկ կը տրտնջեն, կը գանգատին, որովհետեւ իրենց ու իրենց գործին վրայ չկայ Աստուծոյ օրհնութիւնը, որովհետեւ չեն վախնար Աստուծմէ, եւ երբ փորձութիւնը իրենց կը մօտենայ, չեն ըսեր «Ի՞նչպէս չարութիւն ընեմ ու Աստուծոյ դէմ մեղանչեմ»։ Խոյս չեն տար մեղքէն, չեն փախչիր չարութենէն, հապա մինչեւ որ չարութիւն չընեն կամ մեղք չգործեն, չեն քնանար։

Յովսէփ թէեւ ծառայ, ստրուկ, գերի, բայց Աստուծոյ օրհնութիւնը ունէր իր եւ իր գործին վրայ։ Իր տէրը զայս տեսնելով իր տան վերակացու դրաւ զայն եւ ամէն բան անոր յանձնեց։

Ինքը արտաքինապէս գեղեցիկ էր, բայց ալ աւելի գեղեցիկ էր հոգիով ու սրտով։ «Երանի սրտով մաքուր եղողներուն, ինչու որ անոնք պիտի տեսնեն զԱստուած»։

Բայց փորձի ժամանակը հասած էր։

Մեղքը իր հրապոյրով երիտասարդին աչքին առջեւ կեցած՝ տիրուհիին միջոցաւ կը հրաւիրէր զինքը, որպէսզի իր մաքուր սիրտը արատաւորէ եւ անոր մեղանչել տայ : Յովսէփ օտարական մըն էր, օտար երկրի մէջ որմէ՞ պիտի ամչնար, որմէ՞ պիտի քաշուէր, ո՞վ պիտի մեղադրէր զինք, բոլորն ալ անծանօթ էին իրեն, մանաւանդ որ ամէն բան իր ձեռքին մէջն էր եւ իրեն յանձնուած, ու մանաւանդ որ հրաւէրը նոյնիսկ իր տիրուհիէն կուգար եւ ուստի բացարձակապէս գաղտնի պիտի մնար եւ վտանգ չկար դիւք, պատիւ եւ կեանք կորսնցնելու : Ընդհակառակն աւելի վատ պիտի ըլլար իր վիճակը եթէ հրաւէրին ընթացք չտար :

Սակայն Յովսէփ ունէր զօրաւոր զէնք մը, Աստուծոյ վախը, զոր գործածեց այդ պահուն եւ որու շնորհիւ կարող եղաւ իր տիրուհիին ըսել, «Ես ի՞նչպէս այս մեծ չարութիւնը ընեմ ու Աստուծոյ զէմ մեղանչեմ» :

Այսօր շատ մը հայ երիտասարդներ օտարութեան մէջ ցրուած կ'ապրին օտար երկիրներու մէջ, ուր փորձութիւններով շրջապատուած շուտով կ'իյնան մեղքի մէջ փճացնելով թէ իրենց քսակը եւ թէ իրենց ոյժն ու կորովը : Կը դիտես երեսին, հազիւ թեւակոխած են կեանքի դարունը, բայց աշնան տերեւի նման թռչնած ու դեղնած՝ խաղալիք եղած են մեղքին ձեռքը : Ինչո՞ւ այս մարմնական քայքայումը, զարնան մէջ ինչո՞ւ թառամած ծաղիկ, որո՞ւնն է յանցանքը : Թող ուրիշի վրայ չձգեն, թող ուրիշը չմեղադրեն, իրենց դժբաղդութեան, ֆիզիքական քայքայումին ու մահուան պատասխանատուն բունիսկ իրենք են, որովհետեւ տեղի տուին փորձութեան, խոյս չտուին անկէ, սուր չունէին անոր դիմադրելու :

Բանտը եղաւ Յովսէփին հաւատարմութեան իբր վարձատրութիւն : Բայց աւելի լաւ է մարդոցմէ անիրաւութիւն կրել ու բանտարկուիլ, քան թէ Աստուծոյ զէմ մեղանչել եւ մարդոցմէ վարձատրուիլ : Սակայն Աստուած զարմանալի կերպով առաջնորդեց անոր : Անիկա մինչեւ վերջը բանտը չմնաց, հապա թագաւորական աթոռին վրայ բարձրացաւ, որուն արժանի էր իրօք : Ան կրնայ ամէն բան լաւ ընել եւ կարգադրել անոնց համար որ զինքը կը սիրեն :

Ով երիտասարդ, խորհէ այս յաղթութեան նիւթական արդիւնքին վրայ ալ : Խորհէ թէ ի՞նչ սարսափելի պիտի ըլլար այն ատենուան աշխարհի վիճակը, եթէ Յովսէփ մեղանչելով մեռած ըլլար, ալ Աստուած անոր հետ չպիտի գոր-

ծէր, զանիկա չպիտի օրհնէր, անոր յայտնութիւններ չպիտի ընէր : Հազարներ եւ տասը հազարներ սովէն պիտի մեռնէին եւ շատ հաւանական է որ հրէական ազգը իր գոյութիւնը պիտի կորսնցնէր : Մտածէ թէ մէկ պարտութիւն մը կամ յաղթութիւն մը մեր խորհածէն եւ ահնկալածէն շատ աւելի մեծ հետեւանքներ կ'ունենայ :

Ամէն զգուշութիւնով քու սիրտդ պահէ, քանզի կեանքի աղբիւրները անկէ են. (Առակ. Դ. 23) :

ՅԱԿՈԲ ԵՂԻԱՋԱՐԵԱՆ

(Գաղալա)

ԱՓՐԻԿԷ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

— 00 —

Հետեւեալ դէպքը թէեւ 1925 տարուան Յունար եւ Փետրուար ամիսներուն մէջ տեղի ունեցաւ, եւ սակայն որովհետեւ իր այժմէութիւնը չկորսնցնէր եւ շատերուն վրայ ալ կրնայ իրօք դրական ազդեցութիւն մը ձգել, կը հրատարակենք հոս : (Մեթ. Խմբ.)

Յրանքֆուրդ մեծ քաղաքին մէջ մեծահարուստներու կողմէն դիմակաւոր պարահանդէս մը սարքուցաւ : Հանդիսակատար ընկերութիւնը, որ անկարող գեղարուեստագէտներու յատկացուցած էր այդ հանդէսին եկամուտը, որոշած էր Ափրիկէի սեւամորթներուն թիւ պոռք թողալը ներկայացնել : Այդ ներկայացուելիք քաղաքին քնակիքները հետզհետէ կը հաւաքուէին պարասրահի աւելի կամ պակաս սեւամորթային հագուստով : Հանդէսը բախազանց սիրուած ըլլալուն, այցելուներուն խնդրանքին վրայ երկրորդ անգամ ալ կը ներկայացուէր : Այս երկրորդ ներկայացման ամենատար վայրկեաններէն մէկուն մէջ յանկարծ մեծ սրահին մէկ կողմէն ահագին փողի մը ձայները լսուեցան : Ամենքն ալ սարսափաւոր իրենց դէմքերը դէպի հոն դարձուցին, ուրկէ փողին ձայնը կը հնչէր եւ տեսան նաաստիի մը հագուստը կրող փողահարը ու անոր հետ միջօրէական Ֆերմակ հագուստներ հագուած մէկը՝ միջօրէական սաղաւարտ մը գլխուն եւ Աստուածաշունչ մը ի ձեռին :

Ումանք ջղայնօտ՝ ուրիշներ խորհելով թէ խաղին մէջ անակնկալ նորութիւն մը տեղի պիտի ունենայ, ստիպուեցան լռութիւն պահել : ձերմակ հագուստ հագնողը սկսաւ բարձրաձայն գոչել. —

Ո՛վ ափրիկէցիներ, ուր որ ափրիկէցիներ մեծ թուով կը համախմբուին տօներ սարքելու, հոն միշտ պիտի գրտնէք նաեւ միախմբուող :

Դուք հեծանոսներն էք, ես ալ միսինարը. եւ ուր որ հեծանոսական հանդէսներ տեղի կ'ունենան հեծանոսական աղաղակներով եւ սովորութիւնով, հոն պէտք է նաեւ հնչէ ճշմարտութեան աւետարանը : Այս պատճառաւ ահա ձեզի եկած եմ եւ երկու ժամէ ի վեր ձեր մէջ գտնուելով ձեր ըրածները կը դիտեմ : Դիտեցի նաեւ ձեր

սովորութիւնները եւ զանոնք զգուշիկ կը գտնեմ :

Ձեզմէ ոմանք, էրիկ մարդիկդ ճանչցայ. կը ճանչնամ նաեւ. ձեր կիները որոնք հոս չեն, եւ այն կիները զորոնք ձեր ծունկերուն վրայ ունիք, ձեր կիները չեն : Ձեր այս վարքը մէկ բառով միայն կրնամ որակել - շնուծին :

Ափրիկէցիներ, ձեր հանդէսը շնուծին է եւ անոր նպատակն ըլլալու է իբր թէ քաղաքիս աղքատ գեղարուեստագէտներուն կարօտութեանց ձեռնտու ըլլալ. կարօտութիւնները կ'ուզէք մեղքով բառնալ :

Բայց մեղքը մեղք է, եւ մեղքը կործանարար է եւ ոչ թէ փրկարար : Այս ձեր օգնելու կերպին դեռ ըսելիք մըն ալ ունիմ : Աղքատութիւնը վերցնել կ'ուզէք, բայց ձեր խմբերովը : Ձեր մուտքի տոմսերուն համար վճարեցիք միայն 15 մարք, բայց մէկ շիշ փրփրուն գինիի կը վճարէք 50-60 նոյնիսկ 87,50 մարք. իսկ առտուրնէ՛ մինչեւ իրիկուն իր քրտինքներով լոգցող գործաւոր մը կը վաստկի շարաւթը 20 մարք : Ի՛նչ հակասութիւն, խորհեցէ՛ք անգամ մը եւ սեփեցէ՛ք :

Ներկաներէն ոմանք խղրուկ ձայներ բարձրացուցին :

Ամօ՛թ, դուրս նետեցէք այդ անբաղձալին :

Ո՛չ երբեք, ես ալ մուտքի տոմսակս գներ եմ եւ ունիմ ձեզմէ իւրաքանչիւրին չափ իրաւունք հոս մնալու : Մի խարուիք, Աստուած ծաղր չըլլար, մարդս ինչ որ կը ցանէ, նոյնը պիտի հնծէ : Այս հանդէսէն միայն ձեր կործանումը պիտի հնծէք : Ուշ կամ վաղ թերեւս վաղը եւ կամ ձեր մահուան ժաման, երբոր Աստուծոյ դատաստանի ամռոնին առջեւ ձեր ըրածներուն հաշիւը պիտի պահանջուի ձեզմէ, ուր դուք ստիպուած պիտի ըլլաք հաշիւ տալ այս երեկոյեան Ձեր մեղքին համար : Գիտէ՞ք թէ ես ալ իբր այս երեկոյեան ականաւ տես վկայ, ձեզի հանդէպ գանգատ պիտի բառնամ հոն :

Եթէ կարօտեալներուն կուզէք օգնել, օգնեցէք ներքին զգացումէ դուրս ի՛նչ որ աւելի վայելուչ եւ գաղափարական է եւ ոչ թէ զգացական վայելքներով լարուած :

Միսինարը իր խօսքերը լմնցնելէ յետոյ դուրս ելաւ. փողահարին հետ որ իր հումկու փողին ձայնովը դեռ վերջին դատաւարտութիւնը կը կարդար մեղքի հետ սիրաբանողներուն :

Տպաւորութիւնը ահաբեկիչ էր : Թէեւ ոմանք քիչ վերջը փորձեցին խաղերը շարունակել. եւ վայրենի պուպուտներով դարձեալ նախկին տրամադրութիւնները վերստեղծել՝ սակայն չյաջողեցան. ոմանց դէմքերը գունաթափ էին, ուրիշներուն ձեռքերն ու ծունկերը կը դողային, կարելի չեղաւ հանդէսը երկար շարունակել :

Այն օրէն սկսեալ շարաններով խօսուեցան քաղաքին եւ ամբողջ երկրին մէջ, մինակ օրաթերթերը որ միսինարին խօսքերը հրատարակած էր, նոյն օրուան մէջ երեք անգամ տպուեցաւ. եւ սպառեցաւ :

Խօսողը այսօրուն Ֆրանսֆուրդի արուարձաններէն մէկուն հովին է. վեր. ՓԲՊՍԹ անունով, որ ատենօք երկար տարիներ միսինար եղած է Պազէլի միսինարական ընկերութեան կողմէ ի Հնդկաստան եւ տարիներէ ի վեր ներքին միսինար Ֆրանսֆուրթ քաղաքին մէջ :

Մեր դժբաղդ ազգը աւելի դժբաղդացներու համար բաւական ատենէ ի վեր մեր մէջ մուտ գտած է պարսկահանդէսը, դաշտահանդէսը, անբարոյիկ ազգերու դրամ հաւաքելու միակ գրաւիչ մեթոտը, որ անբարոյցուցիչ է : Ֆրանսայի մէջ գտնուողներս անձամբ ականատես եղանք թէ ինչպէս բազմաթիւ մատաղ կեանքեր խամրեցան պարին զոյ երթալով, եւ շատ երջանիկ ըլլալու կանջուող ընտանիքներ կորսուեցան թշուառութեան մէջ, այսպիսի անբարոյացուցիչ ձեռնարկներէ քաջաւերուելով : Հարկ է սեփեցնել զանոնք իրենց օգուտին համար :

Աստուծոյ խօսքը, ապառաժները կոտորտող մուրճ է :

ԿԵԱՆՔԻ ԴՊՐՈՑԷՆ ՔԱՂՈՒԱՄ

Ի՞ՆՉ Է ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՅԻՆ ԱՆՈՒՆԸ

— 000 —

Վեր. Օպրըլին, Տէրոջը քաջ վկաներէն մին, իբր ուսանող երբ ծմեռ ատեն Տամբորդութիւն մը կ'ընէր, իր Տամբան կորսնցուց : Սաստիկ ցուրտին անընդհատ քալելով բոլորովին յոգնած եւ պարտասած կարճ հանգիստ մը առնելու համար ձիւնին վրայ նստաւ : Երիտասարդը յանկարծ զգաց որ քաղցը քուն մը կը ծնշէր իր վրայ, որմէ յետոյ անպայման մահը կը յաջորդէ, եւ սակայն չունէր ոյժ այդ վիճակին աւելի եւս դիմադրելու, ուստի ինքզինքը հոգիներուն Հօրը յանձնեց եւ քնացաւ :

Ցանկարծ զգաց թէ մէկը կը ցնցէր զինքը եւ իր բերնին շիշ մը կը մօտեցնէր : Կառապան մըն էր որ պատասխամբ այդ տեղէն կ'անցնէր եւ ջանացած էր զինքը ստոյգ մահէն ազատել : Օպրըլին գինին եւ քիչ մը անդեղէն առնելէ յետոյ կազդուրուած կըցաւ կառքը նստիլ եւ յաջորդ գիւղը հասնիլ :

Երբ կառապանը զինքը ապահով տեղ մը դրած իր Տամբան կ'ուզէր շարունակել, Օպրըլին իր շնորհակալութենէն յետոյ ուզեց իր բարեբարին բան մը վճարել : Անոր մերժումին վրայ խնդրեց գէթ իր անունը տալ, որպէսզի կարենար զայն իր աղօթքներուն մէջ յիշել : Այս ալ մերժեց կառապանը եւ յարեց, «Դուք հոգեւորական մը ըլլայ կ'երեւիք, կրնա՞ք ըսել ինձ թէ ի՛նչ էր բարի Սամարացիին անունը» : Օպրըլէն պատասխան չէր կրնար տալ, վաճառի Ֆրանսիայ այդ առակին մէջ Սամարացիին անունը յիշուած չէր : «Ուստի ներեցէք ինձ որ իմ անունս ալ անծանօթ մնայ» ըսաւ կառապանը եւ իր Տամբան շարունակեց :

Բարեբարութիւն ընելու ժամանակ կը սիրե՞ս որպէսզի անունդ թերթերու մէջ կամ բեմերէ յիշատակուի :

ԻՍԿԱԿԱՆ ԵՐԿԻՆՔԻ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ

Քարոզիչ մը իր քարոզածողովէն ճիշդ տուն կը վերադառնար, երբ առանձնակեաց հարուստ գիւղացիի մը հանդիպեցաւ, որ սլաքաւոր յօնքերով իրեն խօսեցաւ. «Պատուելի, դուք երկինքի թագաւորութեան մասին քա-

րողեցիք եւ լաւ քարոզեցիք. բայց մենք վաճառականներս գործնական մարդիկ ըլլալով՝ զգալ կ'ուզենք, քան թէ լսել այսպիսի վերացական բաներու վրայով, որոնց մասին ոեւէ գաղափար մը այդքան ալ շուտով չենք կրնար կազմել. լաւ կ'ըլլայ եթէ ցուցնէք ինձ այսօր երկինքի թագաւորութենէն գէթ պզտիկ կտոր մը :

Շատ լաւ, պատասխանեց պատուելին «Քաղաքին միւս ծայրը, ուր որ հին աղբիւրը կայ, պզտիկ տնակ մը կը գտնուի. հոն այրի կին մը կը բնակի իր վեց անգամ փահաս զաւակներով անթի եւ կարօտ : Դուք հարուստ մարդ մըն էք, այսօր իսկ մեծ կողով մը լեցուցէք ամէն տեսակ ուտեստեղէններով, տուէք Ձեր ծառաներէն մէկուն ձեռքը, նոյնպէս քանի մը վերմակներ եւ տաք հանդերձներ, դուք անձամբ հետեւեցէք անոր, տուէք այդ Ձեր բերած պարգեւները նոյն այրի կնոջ, յետոյ Ձեր Սուրբ զիրքը բացէք եւ կարդացէք անկէ գլուխ մը եւ աղօթեցէք այրի կնոջ ու իր զաւակներուն հետ, եւ եթէ դեռ չգիտնաք թէ ի՞նչ է երկինքի թագաւորութիւնը, այն ատուն իմ քովս եկէք» :

Իրիկուսն դէմ հարուստ մարդը քարոզչին վերադարձաւ եւ արտասուածոր աղաղակեց, «Պատուելի, իրաւունք ունիք, հիմա կը հասկնամ թէ երկինքի թագաւորութիւնը ինչպէս կ'երեւի այս աշխարհի վրայ :

.....

ԳՐԵԹԷ ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏԻՆ ՄԷՋ

Մեծ նաւ մը աշխարհի շրջանը կ'ընէր : Հայրենիքի ջուրերուն մօտեցած, վերջին ծոցին մէջ, ուր նաւահանգիստը շինուած էր եւ որմէ նաւը ճամբայ ելած էր, ջախջախուեցաւ. եւ բոլոր նաւաստիները կորսուեցան :

Այս տխուր գոյժը առաջին սպային յանկարծակի այրիացած կնոջ հաղորդելու գործը վիճակուեցաւ բարեկամի մը :

Նախապէս նշանները տրուած էին, նաւուն կ'սպաւէին թէ ընկերութեան պաշտօնեաները եւ թէ հետաքրքիրներու մեծ բազմութիւնը : Այս տիկինն ալ գիտէր թէ քիչ վերջը, երկար ատենէ ի վեր բաժնուած ամուսինը այսօր փառքով տուն պիտի վերադառնար : Սեղանը պատրաստած էր եւ բնակարանը առաջին դռնէն սկսեալ ամբողջովին դափնիներով զարդարած : Սակայն փոխան սպային, անոր մահուան գոյժը ծանուցանող բարեկամն էր որ ներս կը մտնէր զինքը մխիթարելու :

Յետոյ մարդը կը պատմէր թէ իր կեանքին մէջ երբեք չպիտի մոռնար այն աղետալ տեսարանը զոր տեղի ունեցաւ այն բնակարանին մէջ : Տիկինը իր անարեւելի սարսափին մէջ ընկղմած իմ ձեռքս բռնելով միայն հետեւալ բառերը կրցաւ արտասանել «Այսքան մօտ հայրենիքին եւ դարձեալ կորսուած» : Կեանքիս մէջ առելի գալարող ցաւի մը չհանդիպեցայ քան որ ասոր, այսու ամենայնիւ ի՞նչ անբաղդատելի է այն անարկու եւ պակուցի վիշտին որ պիտի համակէ յաւիտեական կորուստեան վիճակուող հոգին, երբ նա պիտի ըսէ. «Ախ, ատեն մը ես երկինքի գահի՞նք կը գտնուէի, գրէ՞մէ մուտ պիտի գտնէի այն փառաւոր լուսասրահներու մէջ, բայց

հիմա, հիմա կորուսած եմ» :

Հոգի, չըլլայ թէ այս Խօսքը քեզի ալ վիճակուի ըսելու :

Ուստի արթուն կեցիր : «Նեղ դռնէն ներս մտէք» :

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՎԵՐՋԱՊԷՍ ԶՆՋՈՒԱԾ

— 000 —

Յակոբիկ գիտէր թէ ինք նկարագրով շատ աւելի բարձր դիրքի մը վրայ կը գտնուէր, քան իր դասընկերներէն ոեւէ մէկը, եւ ասոր համար ներքին գոհունակութիւն մը կը զգար եւ թաղուն հպարտութիւն մը կը սնուցանէր իր հօւրքին տակ :

Միեւնոյն ատեն հետզհետէ աւելի սիրելի կը դառնար թէ ուսուցիչներու եւ թէ դասընկերներու, կը գովուէր ամէն կողմէն : Ծնողքը կը լսէին այս գովեստները եւ աւելի ջերմեռանդութեամբ կ'աղօթէին անոր համար, ու զանիկա միշտ կը խրատէին չտարուիլ դովեստներէ : Յակոբիկ սակայն գիտակից էր, նոյնիսկ ծնողաց անձկութիւնը քիչ մը չափազանց կը գտնէր : Յակոբիկ բնաւ չէր նար կը խորհէր ինքնիրեն : — Օր մը Յակոբիկի մայրը Տիկին Սրբուհի հիւանդացաւ : Այս հիւանդութիւնը ամիսներ տեւեց, որուն մէջ նա երթալով աւելի տկարացաւ եւ վերջապէս ստիպուեցաւ հիւանդանոց փոխադրուիլ : Տիկին Սրբուհի հիւանդանոց փոխադրուելէ առաջ կանչեց իր Յակոբիկն ու ըսաւ. — «Ձաւակս, գիտեմ որ ծով երթալ շատ կը սիրես, եւ նաեւրը դիտել քեզ համար ամենաանհրաժեշտութիւն մըն է, այսուամենայնիւ մայրիկդ միշտ կը վախնայ քեզի համար որ բան մը չպատահի : Խօսք տուր ինձի նաւահանգիստ չերթալ, որքան ատեն որ ես հիւանդանոց կը գտնուիմ ու եթէ Տէրը կամի դարձեալ տուն վերադառնամ, հրաման պիտի տամ քեզի հոն երթալու, միայն կ'ուզեմ հանդարտ սրտով մը հիւանդանոց երթալ եւ զքեզ սիրելի տղաս միշտ ապահով գիտնալ» :

— Մայրիկ, խօսք կուտամ քեզի երբեք նաւահանգիստ չերթալ, ասոր մասին անհոգ եղիր եւ երբեք մի կասկածիր : Յակոբիկդ է որ կը խոստանայ քեզ :

Տիկին Սրբուհի հիւանդանոց փոխադրուեցաւ :

* * *

Օրեր կ'անցնէին, Տիկին Սրբուհիի վրայ ոեւէ փոփոխութիւն մը չէպի լաւութիւն չէր նշմարուէր : Յակոբիկ ամէն օր հիւանդանոցին դռնէն կ'անցնէր լուրերը ընդունելու եւ շաբաթը

անգամ մ'ալ վեր կ'ելլէր զինք տեսնելու:

Շարաթներ կը սահէին, Յակոբիկ յաճախ կը լսէր դպրոցին մէջ տղոցմէ լոգանքի եւ մանաւանդ նոր նաւերու ժամանումի պատմութիւնները:

— Յակոբիկ գիտե՞ս թէ երկու յաճանաւ եւ երեք ընդծովեաներ եկած են նաւահանգիստը, ըսաւ իր ազնուագոյն դասընկերներէն մին, կուգա՞ս այսօր տեսնելու երթանք:

— Ոչ Յովհաննէս, մայրիկիս խոստացայ ծով չերթալ, եւ ուստի անոր անհնազանդ ըլլալ չեմ ուզեր:

— Բայց Յակոբիկ ասոր մէջ անհնազանդութեան խնդիր չկայ, գիտե՞ս թէ դուն նաւերը տեսնել շատ կը սիրես, եւ քննել անոնց կազմուածքը եւ ձեւը, ինչպէս նաեւ ես: Վերջապէս օր մը նաւային երկրաչափներ պիտի ըլլանք, եւ որքան շատ բան տեսնենք նոյնքան օգտակար է մեր ապագային համար, բաց աստի ես երբեք նպատակ չունիմ ծով մտնելու, հեռուէն կը դիտենք եւ կը վերադառնանք: Չեմ խորհիր թէ մայրիկդ անոր պիտի չթուլատրեր: Ես յաճախ այսպէս կ'ընեմ եւ յետոյ մայրիկիս կը պատմեմ, ինք երբեք հակառակ չէ այս բանին:

Երկու ընկերներ ճամբայ ելան նաւահանգիստ երթալու որ երեք քիլոմէթր հեռու էր իրենց տեղէն: Օգը շատ տաք կ'ընէր, այնպէս որ քրտնած էին երբ նաւահանգիստ հասան: Յաճախակէր փառահեղ դիրքով մը կը կենային նաւամատոյցին առջեւ եւ ընդծովեաներն ալ, թուով երեք, շնորհալի կարապետներու նման իրենց տոռունը տարածած շուրերուն վրայ անոնց քով կը կենային: Այցելուներու ընդունելութեան ժամանակն էր: Յաճախակէր երկար տախտակէ ելնարան մը երկնցուցած էին դէպի քարափը եւ ժողովուրդը տասնեակներով կը մտնէին ներս նաւերուն ներքին մասերը դիտելու:

Երկու պատանիները իրարու նայեցան, խօսելու պէտք չունէին, ակնարկները զիրար հասկցան եւ երկուքն ալ ձեռք ձեռքի ներս մտան: Առաջնորդը շատ ազնիւ երկրաչափ մըն էր, ցուցուց թնդանօթները, անոնց մեծութիւնը, զօրութիւնը, նաւին ներքին մեքենաները եւ բացատրեց ամէն ինչ որ զիրենք կը հետաքրքրէր: Ժամ մը յետոյ դուրս կ'ելլէին նաւէն անմոռաց յիշատակներով եւ գոհունակութեամբ:

— Յակոբ սաստիկ քրտնած եմ:

— Իմ շապիկն կը քամուի, Յովհաննէս:

— Երթանք մօտակայ անկիւնը, հոն քիչ մը ծով մտնենք, զովանանք եւ ապա տուն երթանք: Ես ալ մօրս ըսած չեմ, ատոր համար երբեք չլողանք, այլ պաղ ջուրին մէջ պառկինք: Հնազանդ տղայ մը այսպէս կ'ընէ, եւ պէտք է հնազանդիլ, եթէ նոյնիսկ մայրիկն ալ չտեսնէ:

Երկու պատանիները շուտ մը ջուրը մտան զովացան եւ հանդերձները հագնելով տուն վերադարձան, տեսած բաներուն վրայ անուշ անուշ խօսակցելով:

* *

Յակոբիկ տունը հասած էր բայց խղճի անհանգստութիւն մը կը զգար: Ապահով տուն եկած էր, եթէ նոյն իսկ մայրիկն ալ գիտնալու ըլլար այն պարագաները, որոնց մէջ ինքը նաւ գացած եւ ապա լոգցած էր, մանաւանդ Յովհաննէսի նման պատանիի մը հետ, թերեւս չբարկանար, սակայն անհնազանդութեան խորհուրդը զինքը կը չարչրկէր, Յակոբիկ խօսքը դրժած էր: Այս անհանգստութիւնը զինքը կը տագնապեցնէր: Երկու օր վերջ մայրիկին քով պիտի երթար: Ի՞նչպէս երթար անոր քով, ի՞նչ ըսէր:

Յակոբիկ հիւանդանոց գնաց, բայց վեր չեկաւ, հիւանդապահուհիին հետ մայրիկին զրկեց փունջ մը գեղեցիկ ծաղիկներ, որ իր խնայած դրամով գնած էր: Մայրը ուրախացաւ ծաղիկներուն համար, սակայն զարմացաւ որ տղան չեկաւ: Օ՛, թերեւս դասերուն համար ստիպուած էր շուտ վերադառնալ:

Ի՞նչպէս ելլեր մայրիկին առջեւ, չէ՞ որ իր աչքերէն անմիջապէս պիտի կարդար նա եղելութիւնը:

Ութը օրեր անցան, Յակոբիկի սիրտը փոխանակ հանդարտելու աւելի կը վրդովուէր:

Այս անգամ գնաց իր մայրիկին, հաստատ որոշած էր խոստովանիլ անոր եւ այնպէս իր խղճի բեռէն ազատուիլ:

Գնաց տեսաւ մայրիկը, շատ տկար էր ան, իրաւ թէեւ զինք տեսնելով խնդաց, բայց զօրութիւնը կը պակսէր նոյնիսկ իր մանկիկը գրկելու եւ համբուրելու: Յակոբիկ խղճաց մօրը վրայ, ո՛չ անկարելի է չեմ կրնար ըսել, յաւիտեանս կը տառապիմ, բայց մայրիկիս այս տկար պարագային հարուած մըն ալ իմ կողմէս իջեցնել չեմ ուզեր:

Բաժանման ժամը հնչեց եւ Յակոբիկ մայրիկին համբոյր մը տալով դուրս եկաւ: Սիրտը հանդարտ չէր իր մեղքին համար, սակայն իրմէ աւելի մօրը վրայ խորհիլ սկսաւ: Ի՞նչ պիտի ըլլայ մայրս: Որքան աւելի իր մօրը ապագային վրայ կը խորհէր, նոյնքան աւելի կը թանձրանար անհնազանդութեան մեղքին մշուշը իր սրտին վրայ: Օ, ի՞նչ ընեմ: Եթէ մայրս մեռնի ինչպէ՞ս եւ որմէ՞ ներողութիւն պիտի խնդրեմ:

Երկու երեք օր վերջ ալ կեանքը անտանելի եղաւ Յակոբիկի համար. — «Ելլեմ երթամ մայրիկիս եւ ըսեմ անոր . . . »:

Յակոբ գնաց հիւանդանոց, բայց ափսո՛ս մօրը չափազանց տկարութեան պատճառաւ բժիշկը

ամէն այցելութիւն արգիւած էր :

Ի՞նչ ընել . . . : Բայց պէտք էր ազատուիլ այս անհանդուրժելի վիճակէն : Յանկարծ խորհուրդ մը լուսաւորեց իր փոթորկալից միտքը : Վազեց տուն, քարետախտակը ձեռքն առաւ, գրեց մէկ երկու տող, խոստովանեցաւ իր անհնազանդութիւնը եւ անոր տակ յարեց. —

Սիրելի մայրիկ

Քեզմէ նամակով կամ խօսքով պատասխան չեմ ազնկալել, քեզ աշխատցնել չեմ ուզեր, միայն աւրէ ինչ որ քարետախտակիս վրայ գրած եմ, այն ատեն պիտի հասկնամ թէ ներեցիր ինձ :

Իր անհնազանդութեան համար տանջուող

որդիդ Յակոբիկ

Հիւանդապահուհին կարգաց գրութիւնը : Մայրը իր տկար ձեռքը վերցնելով վտիտ մատերը թեթեւ մը սահեցուց գիրերուն վրայ :

Հիւանդապահուհին վար իջաւ եւ անձկանօք սպասող տղուն յանձնեց քարետախտակը :

Յակոբիկ դիտեց գրութիւնը, աւրուած էր :

Ինքը կը տեսնէր իր սիրելի մօրը մատերուն թեթեւ հետքերը որ դեռ կը կենային քարէտախտակին վրայ, բայց գիրերը ջնջուած էին. վերջապէ՛ս ջնջուած :

Օ՛ ի՞նչ թեթեւութիւն մը կը դգար : Այո, թերեւ իր մայրը ա՛լ պիտի չտեսնէր, բայց իր հաշիւները փակուած էին անոր հետ : Իր խաղաղութիւնը վրդովող ալ զան մը մնացած չէր իր եւ մօրը միջեւ :

Երկու օր վերջը Տիկին Սրբուհի մեռաւ եւ Յակոբիկ ալ յուզարկաւորներուն հետ իր մայրիկը հողին յանձնելու գնաց, աղօթեց անոր դամբանին վրայ, լացաւ իր սիրելի մայրիկին կոթուտին համար, սակայն ունէր ներքին երջանկութիւն, հո՛ն վերը պիտի տեսնէր իր մայրիկին քաղցր դէմքը անվարան, զի իր անհնազանդութիւնը ալ չպիտի յիշուէր :

Սիրելի պատանի. — Գիտե՞ս թէ քեզ վրդուող անհնազանդութիւններդ ջնջող Փրկիչ մըն ալ կայ, անոր ձեռքին հետքերը կը տեսնես շատերու կեանքին մէջ եւ կրնաս զուէն ալ դիտնալ Անոր փառաւոր խոստումը. «Ես եմ, ես եմ, որ քու յանցանքներդ ինձի համար կը ջնջեմ, ու քու մեղքերդ ա՛լ պիտի չյիշեմ» :

(Եւայ. ԽԳ. 25) :

«Բու յանցանքներդ մէջի պէս, ու քու մեղքերդ ամպի պէս ջնջեցի, ինձի դարձիւր, քանզի քեզ փրկեցիր» :

(Եւայ. ԽԳ. 22) :

Վատահէ Անոր եւ Անոր գնա՛ : Ահա Աստուծոյ Գառը, որ աշխարհի եւ քու մեղքը կը վերցնէ :

ԹՈՒՐԲԵՐԷՆ ՄԱՍ

ԱՄԷԼԻ ՔՐԻՍՏԻՅԱՆԼՂՂՆ ԹԷԷՍԻՐԻ

— 000 —

Ալմանեանը շարդի վիւայէթլէրինտէ, եէհուտիլէրին չօգ պուլունտուղու պիր շէհրտէ եէհուտիլէրին չօգ սէվէն պիր վա՛իզ վար իտի : Մէրգում ճիւղէսինն մուհապպէթ վէ հիւրմէթինի վազանմըջ օլան եէհուտի Տօգ. Լիւ Քրիստոսա կէթիրմէյի զիյատէսիյլէ արզու էտէր իտի : Տօգ. Լ. վաիզին էվ հէքիմի օլտուղու միւնասէպէթլէ անըն իլէ գօնուշմագ իշին հիւ պիր Փուրսաթը վաշըրմագ իտի, լաքին անըն ճէհտի պիհուտէյէ կիպի կէօրիւնիւյօր իտի : Օ Ինճիլի օգոււմագ իսթէմէզ իտի եինէտէ վա՛իզին քէնաի-նէ քէլամտան ուզուն գըթալար օգոււմասընա միւսասատէ էտէր վէ Յիսուսուն սէօղլէրինտէն խօշլանըր իտի : Լաքին հէր նէ գէման Յիսուսըն վատ օլունան Մէսիհ օլտուղու գիքր օլունուր իսէ շափգասընը ալըպ կիաէր իտի :

Պիր կիւն վա՛իզ թէքրար ինճէ ուզուն կիճէ-նին պիր վազթընա գատար էսքի Ահտաքի փէյղամպէրլիքլէրտէ օլան վատլարըն Նազարէթլի Յիսուսա իթմամ օլտուղունու իսպաթ էթտիյինտէ, Տօգ. «Էվվէթ պու շէյլէր հագիվաթա պէնդէյօրլար վէ ատէմի սայքի իգնա էտի-յօրլար» տէտի : Օլ գէման վա՛իզ անըն էլինտէն թոթթարագ, անա «Էօյլէ իսէ սէվիլիլ տօղթօ-րում նիշին պու ատըմը ալմաղա թէրէտտիւտ էաէրսին, վէ Յիսուսա կէլմէք իսթէմէզսին» տէտէ : Պու սէօղլէր իւզէրինէ հէքիմ հիտտէթլէ այաղա գալգարագ շափգասընը ալտը վէ տըշա-րը չըգար իքէն շէօյլէ տէտի : «Էյէր մագսէտին պէնի տէօնտէրմէք իսէ օնու պաշգասընա սընա չիւնքի պէնտէ մուվաֆֆագ օլմայաճագսըն» : Պու անտէն իթիպարէն տինի պիր գօնուշուզ միւմքին օլմատը : Վա՛իզ պաազէն գօնուշուզ աշմաղա չալըշտը իսէտէ, Տօգ. տա՛իմա մէսէլէ-յի գափատըր իտի : Վա՛իզ իսէ տաթիմա ահ չէ-քէր վէ Բապպա Ֆէրեատ էտէր իտի վէ պիր քիւշիւք միւմինլէր քիւմէսի տախի մէրգում իշին սատաղաթլէ տուա էտէրլէր իտի :

Պիր միւտտէթ տօղթօրուն հալը էսքիսինտէն տահա Ֆէնա կէօրիւնտիւ վէ քրիսթիյանլըզ վէ քրիսթիյանլար հագգընտա աճը պիր բուն իլէ սէօյլէր իտի, վէ սանաաթը միւսասատէ էթտիյի տէրէճէտէ քրիսթիանլար իլէ ալաղա էթմէքտէն սագընըր իտի : Պու սըրատա օ շէհրտէ եէհուտի միսիօնէրլիլ թարաֆընտան Տօգ. Ս. վազ էթտի, վէ սամիունա (ունկնդիր) եէհուտիլէր արասըն-

տա Էօմր իւէ Բրիստոսուն շահիտէրի օլմագ կէ-
րէք իտիյինի թափսիյէ էթտի :

Տինկլէյէնլէր արասընտա Րապպ Յիսուսը
պիւթիւն գալպտէն սէվէն չամաշըրճը պիր գարը
տախի վար իտի : Մէրգումէ գարար էթտիքի
հէր նէ գէման եհնուտիլէր իւէ թէմասա կէլիւր
իսէ անլէրէ չէքինմէյէրէք սէօյլէսին : Լաքին
Րապպըն եօլու անըն իչիւն պոննտան ֆարզը
օլտու : Օ խասթա օլտու վէ Րապպ անըն իւզէ-
րինէ ուզուն վէ աղըր պիր խաչ գօտու : Տօգ. Լ.
անըն հէքիմի իտի : Օ Տօգթօր իւէ չօգ տէֆա
ճանընըն սէվկիւլիւսիւ, խէլասքեարը, հազըն-
տա սէօյլէր իտի : Օ էօյլէ պիր էմնիյէթ էօյլէ
պիր տիրիւիք էօյլէ պիր գուվկէթ վէ գալպին
սըճապըրը իւէ սէօյլէր իտիքի Տօգթօրուն տիգ-
գաթը պոննա ճէլպ օլտու վէ անըն սէօզլէրինի
տինկլէմէքտէն խօշլանըր իտի : Վազթը օլտուգ-
ճա տօգթօր պու գարընըն եանընա կէլիւր իտի :
Հէրքէս տօգթօրուն պու գարընըն եանընա պէօյ-
լէ չօգ կիթտիյինէ վէ ուզուն վազթ օթուրտու-
ղունա թէմաճիւկ էտէր իտի : Տօգ. պու իխթի-
յար գարընըն քեամիլ թէսլիմիյէթ վէ սապընը
վէ աղըր էլէմինի շէքվալանմայարագ վէ մըրը-
տանմայարագ ուզուն միւտտէթ թաշըտըղընը օ
չօգ տէֆա նազլ էտէր իտի :

Ալլահըն ինայէթ վէ մէրհամէթինտէն նաշի
կիւնահլարընը աֆվ էտիպ Գուզունուն գանընտա
եըյգանտըղը իչիւն աղըր համա վէ շիւքը իւէ
տօլու իտի : Էնճամ պու իխթիյար գարը վէֆաթ
էթտի : Տէֆն օլունտու վէ չօզլար թարաֆըն-
տան ունուտուլտու, լաքին պիրի վար իտի քի
անը ունուտամայօր իտի : Օտա տօգթօր Լ. իտի :
Մէրգումէնին վէֆաթը կիւնիւնտէն իթիպարէն
օ փէք սիւքիւթ վէ տիւշիւնկիւլիւ պիր հալ
քէսպ էթտի : Չօգ քէրէրէ գափուսունու գափար
վէ օտասընտա սիւքիւթ վազթ կէլիւրի իտի :
Անըն բահաթսըղ իտիյի պէլլի իտի : Օ խուսու-
տա ոիւալ էտէնլէրէ մուայէն պիր ճէվապ վէր-
մէզ իտի : Պիր միւտտէթ պէօյլէ կէլտի, անտէ
պիր թէպտիլաթ օլտուղունու քիմսէ անկլամա-
տը :

Պիր սապահ փարլայան պիր եիւզ իւէ վա
իզին օտասընա կիտէրէք «Մէվկիւլիւ տօթում
պէնի վաֆթիդ էթմէք իսթէրմիսին շիմտի պի-
լիօրում քի Նազարէթլի Յիսուս Մէսիհ տիր,
արթըզ պաշգասընը պէլէմէյէ հաճէթ եօգ տըր»
տէտի : Վաիզ հայրէթինտէն շաշըտը, Տօգթօր-
տան պաշգա հէր շէյի մէմուլ էտէր իտի : Լա-
քին պու սէօզլէրի մէմուլ էթմէզ իտի : Պու սէ-
պէպտէն հիչ պիր սէօգ սէօյլէմէտի : Կէօզլէրի

եաշ իւէ տօլու օլարագ էլինի Տօգթօրա վէրտի,
վէ էնճամ քէնտի քէնտինէ կէլէրէք, պու թէ-
պէտտիւլաթըն նէ եօլտա կէլտիյինի անտէն
սուալ էյլէտի : Տօգ. Լ. «էօլմէգտէն պիր կիւն
էվվէլ անը կէօրիւպ հաղորդուլիւն վէրմիշ օլ-
տուղուն օլ իխթիյար չամաշըրճը գարըլը տէր
խաթը էտէրսին» : Սէն օտասընտան չըպտըգտան
սօնկրա պէն կիրտիւմ վէ եաթաղընա եազաշա-
րագ մայրիկ պու կիւն նէ հալտէսին տէտիմ :
Մէրգումէ ճէվապէն «պէն չօգ մէսրուր իմ զիրա
րապպըմ կէլիւր պէնի էվէ կէօթիւրէճէք : Շիմ-
տի արթըզ հէր շէյ, հէր շէյ, էյլ օլտու : Ալլահա
համա օլտուն քի պէնի գանըլէ կիւնահլարըմ-
տան փաքլայան պիր խէլասքեարըմ վար, կիւնահ-
լար աֆվըղը նէրէտէ իսէ հայաթ վէ սաաաթէթ
օրատա տըր» : Անտէն սօնկրա պիր Իւահի այէ-
թի սէօյլէտի :

Պէն մէնղիլէ եթիշտիմ

Էլէմլէրիմ խիթամ պուլտու

Սօնկրա պանա տէօնէրէք ահ պէնիմ սէվ-
կիւլիւ Տօգթօրում պէն սաաաղ րապպըմա չօգ
րէճա էթտիմ քէ վաթանա կիթմէգտէն սէնի
պանա պիր տէֆա տահա եօլասըն վէ իշթէ
կէլտին էվվէթ սէն պէնիմ իւչիւն չօգ քրիս-
թիանլարըն եափտըղընտան զիյատէ եափտըն :
Պէն սանա շունու տէմէք իսթէրիմ քի սէնին
իւչիւն չօգ տուա էթտիմ, վէ նեյազ էթմէքտէ
տէվամ էտէճէյիմ թա կիւնահլարընա աֆվըզ
վէ րապպտա սէլամէթ պուլունճայա գատար :
Անսըզ սէլամէթ եօգ տուր. նէ էօմրտէ նէ տէ
էօլմտէ. քեազքի օ սէնին տէ խէլասքեարըն
օլա իտի : Բէճա էյլէքի օ սէնին խէլասքեարըն
օլտուն վէ սանա մէրհամէթ էյլէսին վէ շիմտի
պիր րէճամ տահա վար օնու պէնիմ իւչիւն
եափմագ իսթէրմիսին. օ էօլմէք իւզրէ օլան.
պերիսինին րէճասը տըր : Պեկերիմ քի սօնում
չօգ եազաշա, րէճա էտէրիմ պանա վատէթ վէ
եափաճաղընա տաիր էլինի պանա վէր» տէտի :
Պէնտէ օլ գէման էլիմի քէնտինէ վէրտիմ : Օ է-
լիմի գափիճէ թութարագ «պագ իշթէ ազիզ քի-
թապըմ պուրատա տըր սէնին իւչիւն օլան մի-
հասըմ պուտուր. սահիպ ի մէզմուրուն տէտիյի
կիպի օ ալթունտան վէ խալիս ալթունտան
ալա տըր : Բէճա էտէրիմ սէվկիւլիւ Տօգթօր
պունու սէն ալ վէ կիճէ կիւնտիւզ օզու, վէ Յի-
սուս խէլասքեարը պուլունճայա գատար անը
միւթալաա էթ : Վէ անա րէճա էթ քի քէնտի
քէլամընը սանա աշա : Եա՛ րապպ Յիսուս գըյ-
մէթլու Յիսուս Սէն Տօգթօրում պանա եափտըղը
հէր շէյ իւչիւն միւպարէքլէ, Մուսէսին նեգա-

պընը անըն գալպինտէն գալտըր, վէ անը գուլ-
մէթտէն խէլաս էտէրէք լուհ իւլ գուտսուռու
անա վէր» տէտի: Անտէն սօնկրա թէքրար
տուա էթտի վէ էօյլէ մէսէրրէթ իլէ տօլու իտի
քի գանն էտէրսին պիր գիյաֆէթէ կիտիյօր իտի:
Հիւ պիր գէման պիր քիմսէնին պէօյլէ էօլտիւ-
յիւնիւ կէօրմէտիւ: Սօն սէօղիւ մէսէրրէթ վէ
համտ թէրէնիւմի իտի: Սօնկրա գըյմէթլու
Յիսուս տէյուլ Հաղըրտը, վէ պիր տէրին նէֆէս
ալտըգտան սօնկրա հէր շէյ սիւքիւթ վէ րահաթ
օլտու. պու անտէն իթիպարէն պու իլմիյար
գարը կիպի էօլէպիլմէ քտէն պաշգա պիր արգուս
գալմատը: Պու նասըլ պիր էօլիւմ իտի: Հազի-
գի պիր դալէպէ: Շիմտի պէն քիթապը մուգատ-
տէսիմի ալտըմ, վէ պէնի քիմսէ կէօրմէսին
տէյուլ իսսիգ սօգազլարտան էվէ կիթտիւմ: Ու-
գուն վազթ տուա վէ միւնահատէտէն սօնկրա
կէօզլէրիմտէն գանն էտէրսին փուլլար տիւշտիւ:
Պէն օգուտուսմ- թէքրար օգուտուսմ վէ պու կիւնէ
գատար օգուլյօրուսմ: Պէն գարըմա հէր շէյի
նազլ էթտիւմ վէ քէնտի ինճիլի պէնիւմ իլէ օգու-
տու: Շիմտի իքիմիգոն էմիսիգքի նազարէթլի
Յիսուս րապպըն միսիհի տիւր, վէ պիւզ արգու
էտիյօրուգքի պիւթիւն գալմըն հուզուրուստա
անը իգրար էտէլիւմ, լազը՝ օլան թալիմի ալ-
տըգտան սօնկրա վաֆթիւգ օլալլըմ:

Պէօյլէճէ անլէր թալիւմ օլուսուպ քէնտի,
գարըրը վէ իւլ շօնուպլարը վաֆթիւգ օլուսու-
լար: Տօգ. քեամիլէն եէնի պիր ատէմ օլտու, վէ
չօգ տէֆա տէր իտի «նէ՝ իւլիւն տօղտուղուսու
շիմտի պիլիյօրուսմ»:

Եէհուտիլէր թարաֆընտան չօգ թէատտի-
լէր չէքտիլիսի սէօյլէմէք պիլէ ֆազլա տըր:
Անա գահմէթ վէրիպ թէատտի էթմէք իւլիւն
էլլէրիստէն կէլէն հէր Հարէյի գուլլանտըլար
իտի: Օ պիր քրիսթիյան հալընտա սիւքիւթ վէ
րահաթ պիր էօմը եաշայապիլմէք իւլիւն քէն-
տիսէ սէվկիլիւ օլան պու շէհրի պրազըպ կիթ-
մէքտէն պաշգա պիր Հարէսի գալմատը:

Օ շիմտի ն. շէհրիստէ եաշայօր: Շէհրին վէ
հէվալիսին պիրիսնի վէ էն մէշհուր հէքիմլէրիս-
տէն տիւր: Տօսթու օլան պատուելի Ա. իլէ տէ-
վամի միւքաթէպէտէ տիւր վէ մէքթուլլարը
թէվազու վէ խէլասքեարընա շիւքրանիյէթ իլէ
տօլու տուր: Արգուսու խէլասքեարա խըզմէթ
էտիպ անըն իւլիւն եաշամազ տըր, վէ սօնա
գատար սատըզ գալըպ թաճա նաիլ օլապիլսին
տէյուլ քէնտի իլիւն տուա էթմէսին տօսթու-
տան րէճա էտիյօր:

Միւթ. Ե. Պ.

ԷՍԻՐԿԷՄԷՅԷՆ ՄՈՒՀԱՊՊԷԹ

— 00 —

Պիր գատըն պիր քէլէպէք գօգասընը ուզուն
վազթ հըֆգ էտէրէք, տէլինմիշ օլան գօղանըն
իլիստէն պէօճէյին նէ գատար գահմէթ իլէ քէն-
տի մահպէսինտէն չըգմագտա օլտուղուսու չօգ
աճընարազ սէյր էթմէքտէ իտի: Գատընա էօյլէ
կէօրիւնտիւ քի պէօճէք եարըմ կիւն Հապալա-
տըգտան սօնրա հալա օլտուղու եէրտէ իտի:
Տէլիք օլ գատար քիւլիւք իտիքի իլիստէն չը-
գամայօր իտի:

Էնճամ գատըն պիւշարէ մահպուսա եարտըմ
էթմէյէ գարար էտէրէք, անը չըգմագտան մէնն
էտէն թէլլէրի տիգգաթ իլէ քէատի, վէ տէլիյի
ճիւզիւ պէօյիւթտիւ, վէ իշթէ տէրհալ գահմէթ-
սիւգ օլարազ քէլէպէք տըշարը չըգտը: Շիւման,
չիրքին պիր վիւճիւտ իւզէրիստէ պուրուշուզ
գանատլար եափըլմը իտի:

Անը ազատ էտէն գատըն մէրազ իլէ օ սա-
նիյէյի պէքլէյօր իտիքի անըն գանատլարը քէ-
մալէ էրսինլէր: Հէր շէյ թէքմիլ իտի, ճիւմլէ
րէնկլէր կէօրիւնիւյօր իտի, լաքին պուրուշուշ
վէ գըսսալմը իտի: Գատըն պիսուտէյէ պէքլէ-
տի: Անըն եանկլըշ աճըլըշ քէլէպէյին խարա-
պընա սէպէպ օլմուշ իտի գանատլարը հիւ ալըլ-
մատը: Քէլէպէք հիւ օլտու:

Կիւզէլ, փարլազ ուզուն պիր քէլէպէք օլա-
պիլիւր իքէն, չիրքին պիր մախլուզ օլտու քի
գըսսա էօմրիւնիւ սիւրիւնէրէք կէլիւտի:

Պու վազաա պէնի չօգ քէրրէ գուվիլէթլէն-
տիւրէն վէ պանա եարտըմ էտէն պիր տէրս օլ-
տու, աճըյան կէօզլէրլէ աղըր վէ էլէմ չէքէն
քիմսէլէրէ պազտըլըմտա թէքրար պէ թէքրար
պու վազաալը տէր խաթր էյլէտիւմ, պանա էօյլէ
կէլտի քի պէն Ալլահտան գիյատէ մէրհամէթլի
մուհապպէթէ մալիք իմ: Պէն անլէրի ազատ էյ-
լէմէք իւզրէ թէլլէրի քէսմէք արգու էյլէտիւմ:
Նէ՝ քէօրիւք վէ ահմազլըզ, աճէպա պու չէքի-
լէն աղըրլարըն վէ ահլարըն պիր տանէսի էքսիք
օլտա, անլէր իլիւն խայրլը օլաճազ մը իտի:
Պէրրազ նուրտա կէօրէն մուհապպէթ, քեամիլ
մուհապպէթ, սէվկիլիւսինին քէմալիյէթէ էրմէ-
սինի իսթէր. պու սէպէպտէն թէրահհիւմ էտէն
պիր գաիֆլիք իլէ կէլիւն օլան պիր էլէմի գալ-
տըրմազա րազի օլմազ:

Թէրճէմէ



ԵԱ ՍԵՆ

Սէնին իման էօմրին հալա նասըլ օլուրտա էն ուճուղ եօլտա պիր քրիսթիան օլուրում տէյու չալըշմագտան մը՝ իպարէթ տիր։ Եօգսա գալպիյին տէրին արգուսու վէ եանան հասրէթի էնճամ արթըզ պէն էօմրինին հէր պագիյէսին տէն, նէֆսփէրէսթլիք վէ մուաննիտլիյինտէն, գուրթուլմագ մը՝ տըր։ Միւսաատէ էտիյօրմուսունքի Յիսուս պիւթին էօմրինիւ, ճիւմլէ տաիրէսիյլէ, օլսուն տիւշիւնմէք եա օգուսագ, սէօյլէմէք եա եագմագ, քէնտի էլինէ ալսըն, քի օ, սալթ քէնտիսի քեամիլէն պու շէյլէր իւղէրինէ սէլահիյէթ հագղընա սահիպ օլսուն, եօգսա սէն աճէպա շախսի արգու վէ հազսլէր գէնճիւլէրի իլէ, էնտիշէ վէ գօրգուլար սէպէպիւնտէն, քէնտի էօլիւմիւ վասթիւսըլէ անլէրի սէնտէն իսթլէմէյէ հագղը օլտուղու շէյլէրի անա թէսլիմ էթմէքտէն մէն մի օլունույօրսուն։ Սէն բուհ իւլ Գուստուն մէսէրրէթի իլէ էօյլէ սօլմուշմուսուն քի էթրաֆընա հիշ պիր գէման թէօքէզ վէրէն եախօտ ինճիտէն նէվտէն աէյիլ, իլլա մէսուտ վէ մէսրուր գըլան թէէսիրին օլա։ Օ քի օղու իլէ պիգէ հէր շէյի ինսան էյլէտի։ Թաշղըն վէ ազիզ պիր մէսէրրէթ պիգիմ իշիւն վէ էթրաֆըմը իշիւն ինսան էթմիշ տիր։ Պու մէսէրրէթի, էնտիշէլէրին, կիւնահլարըն, եախօտ նէֆսփէրէսթլիյին սէպէպիւնտէն մէն էտէն պիրիմիսին։ Սէնտէն պիր գուրպան թալէպ էտիլտիյինտէ վէ օ տա հիշ թագտիր օլունմատըղընտա նասըլ պուլունսըրսուն։ Յիսուս Քրիստոսուն մէսէրրէթ վէ սէլամէթիլլէ մէմու գալըրմըսըն։ Օ քի էլէ վէրիտիլի տէնէթլի կիճէտէ օ մէսէրրէթ վէ սէլամէթի հըֆզ էյլէտի վէ անը քէնտի շայիրտլէրինէ տախի պրագտը. Յովհ. 15. 11, 16. 32, 17. 13։ Օ սօն տէրէճէտէ թէճրիպէ օլունտու, վէ սատըզ գալտը, եա սէն։

Թէրճէմէ

ՐԱՊՊ ՊԻՁԻ ԹԵՁԵՔԻԻՐ ԷՏԵՐ ՎԷ ՊԻՁԻ ՄԻԻՊԱՐԷՔԻԷՐ

Մէգ. 115, 12-13

Նոն թուֆանըն միւտհիշ վէ պիհուսուտ սու չէօլիւ իւղէրինտէ քէնտիսի եալընըզ հիսս էյլէտիյինտէ Րապպ անը թէգէքքիւր էյլէտի։ Թէք. 8. 1։ Օ Մըսըրտա անկարեաճըլար եիւղիւնտէն հատտէն գիյատէ ճէֆա չէքէն գալմընը թէգէքքիւր էյլէտի վէ գուլու Մոփսէսի

անլէրէ խէլասքեար հալընտա կէօնտէրտի։ իլուր. 57-10։ Պապէլ էսարէթինտէ օլան եէհուտիլէրին ֆէրեատընը իշիտիպ կիւրոսըն բուհունու թէշվիգ էյլէտի. Եգրաս 1. 1։

Օ ճիւմլէտէն թէրք օլունմուշ օլան ֆագիր Ղազարոսը թէգէքքիւր էյլէտի վէ անըն սաաթը կէլտիյինտէ մէլէքլէր վասըթասըյլա Աբրահամըն գուճաղընա կէօթիւրիւտիւ. Ղուկ. 16. 20-22։

Սէն ճիւմլէ ատէմլէրտէն թէրք օլունմուշ օլապիլիւրսին, սէվկիւլիւլէրին էօլմիւշտիրլէր, էթրաֆընկտա օլանլարտա սէնին մէսէրրէթէ, մուհապպէթ վէ իշթիրաքա միւճթաճ օլտուղունկու խաթըրլարընա պիլէ կէթրմէգլէր, լաքին Րապպ սէնի թէգէքքիւր էտէր. Օ սէնի թէգէքքիւր էտէր։ Րապպ Յիսուս պիշարէլէրի պէօյլէ թէգէքքիւր էտէր իտի։ Երուսաղէմտէ վուգու պուլան պիր պայրամտա օթուղ սէքիզ սէնտէն պէրու եաթան պիր խասթայը թէգէքքիւր էյլէտի վէ հէր եէրտէ պուլունան պիշարէլէրի, սահիպսիզլէրի վէ թահքիր օլունանլարը թէգէքքիւր էտէր վէ անլէրտէն պիրինին գայ օլմասընը իսթէմէզ իտի։ «Պիր վալիտէ քէնտի սիւտ էմէր չօճուղունու ունուտապիլիմի»։ Եսա. 49. 14-15։ Վէ Րապպ քէնտինէ խըտմէթ էտէն պիրինի ունուտոլմու։ Փէտէր տախի քէնտի պիրիճիք օղունու թէգէքքիւր էյլէտի, անըն իշի գայ օլմուշ կէօրիւնտիլիւնտէ վէ մէգարը միւհիւրլէնտիյինտէ։ Էօյլէ իսէ, ա'հ էօյլէ իսէ պէն տախի ունուտուլմուշ օլմագլըղըն աճըսընա թէհամմիւլ էտէպիլիւրիմ։ Եվլէթ պէն քէնտի քէնտիմի տախի ունուտապիլիւրիմ վէ պաշգալարտան հագղ իւղըն մէմուլ էթտիլիմ շէյլէրիտէ արամամ պէս շու պիր շէյի պիլիւր իսէմ քի Րապպ պէնի թէգէքքիւր էտէր։

Շու տախի կիւղէլ պիր շէյ տիր, էյեր պիգ Ալլահըն էմրի վէ արգուսը մուճիպպ ֆագիր, սահիպսիզ վէ ունուտուլմուշ քիմսէլէրէ ֆարզը եօլարտա մուհապպէթ կէօսթէրէք վէ խըտմէթ էտէրէք իսպաթ էտէպիլիւր իսէք քի անլէր Ալլահըն հուգուրունտա ունուտուլմուշ տէյիլ տիրլէր։

«Րապպ սէնի հիշ պիր վագթ ունութմատը,

էյ ճանըմ սէն տախի Անը ունութմա»։

(Փասթէօր) ՍԱՐԱՍԻՆ ՅՕՐՔԱՐԹ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՆԲԵՐԻ ՍԱՐԵՓԹԱ ՄԱՀՃԱԿԱԼԸ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ.— Հալէպ Բեթեղդա հիւանդանոցին մէջ, ուր քիչ բացառութեամբ միայն չքաւորներ կը խնամուին, 1926 Յուլիսէն սկսեալ մենք եւս մահճակալ մը ստանձնեցինք, ուր այդ ժամանակէն սկսեալ հիւանդ մը կը դարմանուի Բանբերի ընտանիքին անուամբ: Մենք առաջին անգամ պղտիկ մահճակալ մը ստանձնեցինք, միայն պղտիկ աղջիկ մը կամ աղայ մը դարմանելու ծախքերը հոգալու: Եթէ Բանբերի ընտանիքը սոյն մահճակալի ծախքէն աւելի գումար մը հանէր, մեծ մահճակալ մը կամ երկու պղտիկներ ստանձնելու նպատակ ունէինք: Բայց մինչեւ հիմա չկրցինք այս փափաքին հասնիլ, թէեւ անոր մեծագոյն պատասխանատուութիւնը մեր վրայ կը ծանրանայ, անոր համար որ մենք մինչեւ

գեր կը կատարէ շատ մը փոքր մանուկներու:


Այս առթիւ ահա պղտիկ տեղեկագիր մը տուէ յետոյ կ'ուզենք Բանբերի ընտանիքին հարցնել թէ արդեօք չե՞նք կրնար 2-3 մահճակալ ամենայն դիւրութեամբ ստանձնել եւ եթէ ոչ այս, ինչո՞ւ գէթ մէկ հատը լման չստանձնենք յետ այսու:

Անոնք որ այս բարեսիրական գործով կը հետաքրքրուին, թող գրեն մեզ եւ ամսալճարներու տոմարակ ապաւրին, մենք անմիջապէս պիտի ղրկենք իրենց, բացառութիւններով մէկտեղ: Ամսական 350-400 ֆրանքի գումար մըն է մեզմէ պահանջուածը:

Այս առթիւ անգամ մըն ալ եւ հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնենք Բանբերի ընտանիքին այն անդամներուն, որոնք իրենց պղտիկ մասաբաժիններով մեր հիւանդ արեւակից զաւակներուն օգնեցին: Թող այս տողերը իբր շնորհակալութեան գիր ընդունուին նաեւ անոնց կողմէն:

1926 Օգոստոսէն մինչեւ 1928 Յունիսի վախճանը ղրկած ենք հետեւեալ գումարները.—

1926	Օգոստոսին	370	Ֆրանք
	Նոյեմբերին	280	»
	Դեկտեմբերին	315	»
1927	Յունվարին	370	»
	Ապրիլին	250	»
	Յունիսին	347	»
	Նոյեմբերին	325	»
	Դեկտեմբերին	200	»
1928	Յունվարին	240	»
	Փետրուարին	100	»
	Մարտին	456	»
	Յունիսին	690	»
Գումար		3943	Ֆրանք



հիմա բաւականաչափ չխօսեցանք մեր այս սամարացիական գործին մասին:

Արդ, սոյն նպատակը երբ ծանուցինք Բանբերի մէջ, շատեր գրեցին եւ ներկայացան մեզ այս գործին մէջ աջակցելու, Մարտէյլէն, Լիօնէն, Օպէնասէն, Վալանտէն եւ այլն, այսու ամենայնիւ քանի մը ամիս յետոյ տեղի ունեցած շումաժին պատճառաւ, շատեր յակամայ չկրցան իրենց պարտականութիւնը կատարել: Ասոնց մէջէն ամենահաւատարիմը Լիօն եւ Բօնթ Օպէնաս մնացին, այնպէս որ մենք թէեւ չկրցանք մէկ մահճակալին ամբողջ ծախքը հոգալ, բայց հոգացինք գէթ կէս մասը:

Պատկերին մէջ կը տեսնենք Բեթեղդայի մէջ Սարեփթա մահճակալներէն մին՝ որուն վրայ հիւանդապահ քոյրը կը բացատրէ հիւանդ պղտիկին այս գրութեան նշանակութիւնը: Ուրիշ պատեհութեամբ պիտի ներկայացնենք նաեւ ուրիշ պատկերներ, որոնք ցոյց պիտի տան թէ այս մեր փոքր սամարացիական գործը ինչ բարեբար

Ֆրանսայի Հայ աւետարանական եկեղեցիներուն միութեան տարեկան ժողովը տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր ամսոյն 10-15 ի օրերուն Լիօնի մէջ: Ներկայացուցիչներ պիտի ունենան Ֆրանսայի մէջ գտնուած բոլոր Հայ աւետարանական եկեղեցիները:

Բանբերի Օգոստոս թիւը տպագրական արգելքներով ճիշդ ժամանակին Լոյս չտեսաւ այս պատճառաւ Սեպտեմբերի թիւին հետ զոյգ թիւ կը հրատարակենք եւ մեր ընթերցողներուն ներողութիւնը կը խնդրենք սոյն յապաղման առթիւ:

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպգր. Ա. Երէցեան, 40, Քիւտէ Տօմինիքէն